243
6 -98

П 96/115

12004

4736

243
Ե-93
ՍՑ. 1670-ԱՀ

# ԳԻՐՔ ԱՂՕԹԻՑ

սրբոյ հօրն մերոյ

## ԵՓՐԵՄԻ ԽՈՐԻ՛Ն ԱՍՈՐ-ԻՈՅ

Ի հայրապետութե Տն ՅՈՎՀԱՆ-՛ՆԷՍԻ Արժանընտիր կաթուղիկոսի Ամենայն հայոց և ասպետի։

Հրամանաւ արդեամբք և ծախիւք Աստուածարեալ Առաքելաշաւիղ վիճակաւոր Առաջնորդի և Մետրա-պօլտի հայոց ղարաբաղայ և այլոց՝ Տեառն ՊԱՂՏԱՍԱՐԱՅ Իշխա-նազնի Հասան Ջալալեան Սրբազան Արք Եպիսկոպոսի և Ասպետի։

(ԱԳՔ 36208)

Ի տպարանի Նորին Բարձր Սրբազնութեան։
1858։ ——— ռՅԷ։
Ի ՇՈՒՇԻ։

Աղօթք զօրաւոր Սրբոյ Հօրն ԵՓՐԵ-
ՄԻ Խասուրայն Ասորւոյ։
Ասացեալ խօսք ընդ Աստուծոյ։

(Ա.)

ՏԵ՛Ս ՏԷՐ ԶՏԱ-
ՌԱՊԱ՛ՆՍ ԻՄ ԵՒ
զցաւս հոգւոյ իմոյ բազմա-
մեղիս. դա՛րձ՝ նե՛րեա՛ եւ՝ի քեզ
առաջնորդեա՛։

Որ ասացեր՝ դարձարո՛ւք առ իս, եւ ես
դառնամ առ ձեզ։

(Բ.)

Ինձ լքելոյս ողորմեա՛. ինձ եղկելւոյս
օգնեա՛. ինձ խաւարելոյս ճառագայթեա՛.
ինձ մոլորելոյս առաջնորդեա՛. որ չե՛մ

(30901-կ.2)



մեղօք և անթիւ յանցանօք. և 'ի յոր-
ձանս անօրէնութեան տարաբերեալ
ծփիմ։

(Պ·)

Որպէս պետրոսին ձեռնարկեա. գոչեմ
որպէս մաքսաւորն արդարանալ։

(Պ·)

Շնորհեա որպէս զաւազակին. բաց
ինձ զդուռն կենաց ճանապարհին և
մեծ արքունական առագաստին։

(Ս·)

Ով խորք մեծութեան և իմաստութեան՝
կամ զըմբռնելոյ՝ որ 'ի խորս ծովուն
անկեալ եմ մեղօք. զերծո և զօրացո
զիս առնել զկամս քո. սգալ և լալ 'ի
տուէ և 'ի գիշերի զամենայն անօրէ-
նութիւն և զհեղգութիւնս իմ։

(Օ)

Աղբիւր կենդանութեան՝ արբո ըմ-
ծարաւ հոգիս իմ յառատաբուղխ վտա-
կէ քումմէ. որ պապակեալ տոչորիմ 'ի
բազում անօրէնութեանց իմոց. խթեա
'ի քարացեալ սիրտ իմ. և հան ինձ ար-
տասուս ապաշխարութեան։

(Ե.)

Գանձդ ամենայն բարութեանց. շնորհեա ինձ դանկի միոյ չափ 'ի բազում քո առատ բարեացդ՝ որ չարաչար եմ աղքատացեալ և մերկացեալ. զգեցո և կերակրեա զիս արտասուօք ապաշխարութեան:

(Զ.)

Լոյս Ճշմարիտ Քրիստոս՝ որ լուսաւորես զամենայն մարդ՝ լուսաւորեա ըզխաւարեալս մեղօք. բաց զաչս մտի իմոյ. և հաստատեա յերկիւղ և 'ի սէր պատուիրանաց քոց:

(Է.)

Մի՛ դատեր. և մի՛ դատապարտեր զիս Տէր ըստ անբաւ զազիր գործոց իմոց. և մի՛ կացուցես զիս ընդ այլոցն՝ որք գայրացուցին զքեզ. այլ ընդ փառաւորեալսն փառաւորեա. և ընդ պսակելոցն պսակեա և ընդ բերկրելոցն ուրախացո:

(Ը.)

Շատ է ինձ Տէր. բայց յուսամ յողորմութիւնսդ քո. զի և շունք կերակրին

'ի փշրանաց անկելոց սեղանոյ տեառն իւրեանց. շուն կոչեմ զիս տր̃՝ զի գտայ-ցեմ զկնի քո Հովիւ բարի՝ խնդրեմ զիս զմոլորեալս. Նաւապետ բարի Յս̃՝ փրկեա զիս 'ի բազմութենէ ալեաց ծո-վու մեղաց իմոց. և տուր ինձ նաւա-հանգիստ խաղաղութեան.

(ԺԱ.)

Տուր ինձ տէր սուգ. և արտասուօք կարողացո զմարմինս իմ. կակղացո ըզ-քարացեալ սիրտս իմ. և ժողովեա ըզ-միտս իմ 'ի քեզ. Ջնջեա զբազմութիւն յանցանաց իմոց. և շնորհեա ինձ զօ-գուտն իմ. Ընկալ և մի անտես առ-ներ զհառաչանս սրտի իմոյ.

(ԺԲ.)

Տուր ինձ իմաստութի̃. և տնկեա տր̃ զահ և զերկիւղ քո 'ի սրտի իմում. Լուսաւորեա զխորհուրդս իմ. կարո-ղացո զմարմինս իմ ժուժկալութ̃ կալ 'ի պատուիրանի քում յամենայն ժամ.

(ԺԳ.)

Բաց տէր զաչս սրտի իմոյ. և լուսաւո-րեա հոգւովդ սրբով. Պարգևեա ինձ

147

առողջ խորհուրդս և առաքինի վարս՝ ողբալ հանապազ. ահիւ և դողութ̃ե կալ առաջի՝ յա̃մ ժամ անձանձրալ:

(Ժ.Գ.)

Ո՛վ բարերար և մարդասէր տէր՝ առանց չարչարանաց և ժուժկալութեանց զխմորդ ազատեցայց ի բազմութենէ մեղաց իմոց. զի մարմնով տկար եմ. և հոգւով խաւար. ողորմեա՛ տէր՝ և որպէս կամիս օգնեա՛ ինձ.

(Ժ.Դ.)

Անոխակա՛լ տէր՝ մի՛ վասն բազում չարեաց իմոց անտես առներ զիս. այլ դարձի՛ր ի յիս՝ և դարձո՛ զիմ ցանկութի̃ն իմ ի քեզ. և զքեզ տուր միայն սիրել ի բոլոր սրտէ իմմէ: Ի նուազ և յանպաճոյճ կերակրոց ամբո՛ղջ պահեա զմարմին իմ.

(Ժ.Ե.)

Պատկերացո՛ տէր՝ զանհրաժեշտ գալուստ քո առաջի աչաց իմոց. և դողացո՛ զմարմինս իմ սգալ և լալ անդադար յերկիւղէ ահեղ դատաստանաց քոյ. և մի՛ փակեր զգութ արարչական

սիրոյ 'ի ստեղծուածոյս քո՝ որ մեղօքս եմ մեռեալ։

(ԺԷ.)

Աճեցո՛ տէր զբարիս գործել ինձ յամ ժամ. և խափանեա՛ զամենայն չարիս 'ի չար մտաց իմոց. 'ի պիղծ և յանուղ-ղայ գնացից՝ և 'ի չար սովորութենէ դադարեցո՛ զիս. և հաստատեա՛ յերկիւղ և 'ի սէր պատուիրանաց քոց։

(ԺԸ.)

Արեգակն արդարութեան՝ փրկիչ իմ և ազատիչ Յիսուս Քրիստոս. 'ի լոյս քո ապաւինիմ. լուսաւորեա՛ և ջերմացո՛ զսիրտս իմ. հրակիզեա՛ զչար խոր-հուրդս իմ. և հալեա՛ զսառնամանիս մեղաց իմոց։ Շնորհեա՛ տէր զարուն հոգւոյ իմոյ՝ ծաղկիլ և պտղաբերել զարդարութեան պտուղն։

(ԺԹ.)

Ազատիչ Քրիստոս աղաչեմ զքեզ 'ի դառնաշունչ օդոց մեղաց ձմերայնոց. զխաւարեալ և զսառուցեալ հոգիս իմ պայծառացո՛ և ջերմացո՛. և ցօղեա՛ զցօղն շնորհի ջերմութեան քո 'ի

յանդատանս մտաց սրտի իմում։

(Ժ.)

Շնչեա՛ տէր շնորհաւ քաղցրութեան Հոգւոյդ սրբոյ ՚ի խստացեալ և ՚ի թանձրացեալ սիրտս իմ. և զարթո՛ ուրախընդոստ փութալատակմամբ քո ընդ- սառնացեալ և ցամաքեալ միտս իմ։

(ԺԱ.)

Բա՛ց տէր զփակեալ դուռն սրտի իմոյ. և ծագեա՛ ՚ի ներքս զլուսաւորութիւն Ճառագայթից քոց։ Սրբեա՛ և զաղտ մեղաց իմոց. և զվէրս հոգւոյ իմոյ բժշ- կեա՛։ Ամրացո՛ երկիւղիւ քո և զօրացո՛ առնել զարդարութիւն յամ ժամ։

(ԺԲ.)

Աղբերացո՛ տէր զգլուխ իմ ՚ի բղխումն արտասուաց. լուա՛ զթարախ հոգւոյ իմոյ, սրբեա՛ զգարշանս իմ։ Եւ զգոր- ծօղս չարեաց՝ փոխարկեա՛ ՚ի զղջումն ջերմ սիրոյ քո՝ զգաստ մարմնով կեալ ՚ի պատուիրանի քում։

(ԺԳ.)

Զգեա՛ տէր զձեռն քո ՚ի նաւաբեկեալս՝ որ ընկղմեալս եմ ՚ի խորս չարեաց.

փրկեա զիս 'ի սաստիկ ծովածուփ բռնութենէ մեղաց իմոց ալեաց։ Ան-ձեռն տէր և կարկեա զխոտորեալս միտս իմ 'ի զբաղմանց և ունայնութեանց կենցաղոյս։

(Ժ·Գ·)

Մ՛րբեա տէր զծառայս. հոգւոյ իմոյ յառատաբուղխ շնորհէ քումմէ. և մի անտես առներ զտոչորումն սրտի իմոյ։ Պապակիմ 'ի տապոյ չարեաց իմոց. զովացո և լուա զապականեալ և զհոտեալ շրթունս իմ ջրով ողորմութեն քո

(Ժ·Դ·)

Ո՛ռոգեա տէր զլուսաւորումն և զխաղաղումն շնորհաց քոց 'ի սրտի իմում։ Եւ զդաւագին գիշեր մեղաց 'ի մտաց իմոց հալածեա. և մարմնոյ իմոյ շնորհեա զարիական վարս՝ առաքինութեն կեալ 'ի հաճոյս կամաց քոց։

Եւ հա՛ն զփուշ մեղաց 'ի սրտէ իմմէ. զի հոգի իմ չարաչար վիրաւորի. և սերմանեա սերմն բարի 'ի սրտի իմում աճեցուցանել և պտղաբերել զարդարութեան պտուղն։

(ԻԶ)

Հալածեա՛ տէր զխաւար ՚ի հոգւոյ իմոյ. և զգեցո՛ ՚ի լոյս արդարութե՛ ճառագայթից քոց։ Զարդարեա՛ երկիւղիւ, զզղջմամբ և արտասուօք զսիրտ իմ. երկնչիլ ՚ի դատաստանաց քոց և պահել զամենայն պատուիրանս քո։

(ԻԷ)

Զարթո՛ զիս տէր յահագին խորութենէ քնոյ մեղաց. և զտարակուսեալ մարմինս իմ զգաստացո՛ յամ գործս բարիս. խորհիլ միշտ մեծաւ երկիւղիւ, և առնել զհաճոյս քո յամենայն ժամ։

(ԻԸ)

Ազատեա՛ զիս տէր ՚ի ծառայութենէ մեղաց. և խառնեա՛ ՚ի թիւս ծառայից քոց՝ որք սիրեցին զքեզ և զպատուիրանս քո պահեցին. տո՛ւր զերկիւղ նոցա ՚ի սիրտ իմում. և ուսո՛ զիս գնալ ՚ի շաւիղս գնացից նոցա։

(ԻԹ)

Թեթևացո՛ զկարիս մարմնոյ իմոյ՝ և յաճախեա՛ յիս զշնորհս Հոգւոյդ սրբոյ՝ լինիլ տաճար և բնակարան ածային

կամաց քոց։ Ընդ այդ սիրով սիրել զքեզ և տալ զիմ՝ ցանկութիւնս և զսէր աշխարհիս այսորիկ. որով եղև կորուստ և անցումն հոգւոյս։

(Լ.)

Ողորմեա՛ տէր յանմարդաբնակ անապատիս. և 'ի ձեռն սորին արժանորեա՛ զիս լսանիլ է առաջին սուրբ հարանցն այլ և զգաստ ժուժկալու է ժառանգել զխոստացեալ պարգևսն։

(ԼԱ.)

Առաջնորդեա՛ ինձ տէր 'ի նեղ և 'ի նուրբ ճանապարհն. որպէս առաջնորդեցեր որդւոց քոց. և զօրացո՛ տկարութիւն իմ ժուժկալութեամբ և համբերութեամբ գնալ 'ի ճանապարհն քո ջերմեռանդ սրտիւ։

(ԼԲ.)

Նայեա՛ց տէր 'ի նեխեալ և թարախեալ հոգիս իմ. և լուա՛ աստուածային ջրով. հոգևոր աղիւ համեմեա՛. և անուշահոտ խնկով սրբով օծեա՛ և զկատարեալ առողջութիւն ընձեռեա՛։

## (ԼԳ.)

Նօսրացո՛ տէր զքուն աչաց իմոց և թափեա՛ զնիրհումն ՚ի գլխոյ իմոյ. զի ծանրացեալ դանդաղանօք՝ պաշարէ զմարմինս իմ։ Արա՛ զիս տէր արթունս և պատրաստս յամենայն ժամ. զի զգաստութեամբ և արդարութեամբ վարեցից զկեանս իմ.

## (ԼԴ.)

Տե՛ս տէր զլքումն որովայնի իմոյ որ զօրացեալ է ՚ի վերայ իմ. հանապազ ցանկոյ կերակրոյ և ըմպելւոյ՝ և համեղութեան խորտկաց. այլ դու տէր յամի կարող՝ կտրեա՛ զցանկութիւն մարմնոյս տենչանաց։

## (ԼԵ.)

Ու քանզի միտք իմ ցնդեալ պղտորին բանդագուշեալ շրջին ՚ի հասարակ երկրաւոր կենցաղոյս. այլ դու տէր լուսաւորեա՛ զաչս հոգւոյս առանց զբաղմանց և երկմտութեանց՝ արի և զգաստ ամենայօրդոր փութով գալ զհետ աստուածային սիրոյ քո։

(Լ.Զ.)

Հալածեա զամ՝ չար մտածմունս եր-կրաքարշս ՚ի խորհրդոց մտաց իմոց. արմատ բարեաց տնկեա հաստատուն ՚ի սրտի իմում. եւ պտուղ շնորհաց ՚ի հոգիս իմ նկարեա։

(Լ.Է.)

Աղաչեմ բարերար եւ ողորմած տէր՝ արթունս եւ զուարթունս պատրաստեա զիս. ուսո ինձ գնալ ՚ի ճանապարհս քո բարի. զի արժանի եղէց մեծի փա-ռաց քոց.

(Լ.Ը.)

Եւ քաղցր ցանկութիւն ճաշակման՝ մի՛ զբաղեցուցանէ զմիտս իմ. արդ՝ հալածեա զորկորստութիւն յինէն յոր-մէ խաբեցայ միշտ. եւ կերակրեա զիս երկիւղիւդ քով սրբով։

(Լ.Թ.)

Առաքեա Տէր զմի ՚ի սերովբէից քոց՝ բերելով կայծակն հրոյ՝ մերձեցուցա-նել ՚ի շրթունս իմ. եւ հանցէ ՚ի բաց զանօրէնութիւնս իմ. եւ զմեղս սրբես-ցէ. եւ զխորհուրդս իմ մաքրեսցէ. եւ

զաղտեղութիւնս իմ ջնջեսցէ և լուսաւորեսցէ զմիտս իմ. ժառանգել նովաւ զկեանսն յաւիտենից.

(Խ)

Առաքեա՛ տէր զբաժակ ուրախարար հոգւոյդ սրբոյ 'ի յերկնից՝ որ ծարաւիմս առ քեզ. արբո՛ և զուարթացո՛ զեռանդն սիրոյ քո. լո՛յծ և 'ի բա՛ց ջնջեա զմրուր դառնութե՟ յանցանաց իմոց.

(ԽԱ.)

Առաքեա՛ տ՟ր զլոյս քո. և լուսաւորեա՛ զմիտս իմ. և զխորհուրդս իմ լուսով գիտութե՟ քո. զխաւար մտաց իմոց հալածեա՛ և զտկարութի՟ անձին իմոյ կակղացո՛ 'ի ջանս և 'ի վաստակս հոգւոյ իմոյ.

(ԽԲ)

Առաքեա՛ տէր զհրեշտակ խաղաղութե՟ քո վերակացու և պահապան անձին իմոյ՝ որպէս իշխանութիւն՝ գնալ 'ի վերայ իժի և քարբի. և կոխել զամենայն զօրութիւնս թշնամւոյն. և զիս պահեա՛ տէր որպէս բիբ ական ընդ հովանեաւ թևոց քոց.

(ԽԳ)

Յորժամ երթայցեմ 'ի ճանապարհի, մի՛ թողուր զիս միայն. այլ առաքեա՛ զօգնականութիւն քո զկնի իմ, պահելով զիս յամենայն փորձութեանց սատանայի 'ի տուէ և 'ի գիշերի։ Նաև չտալ թոյլ մեղանչել յողդողդ և թոյլ մտաց իմոց. այլ կոծել զկոծ 'ի վերայ մեղաց և անօրէնութեան իմոյ։

(ԽԴ)

Պահեա՛ զիս տէր 'ի բանից և 'ի գործոց. 'ի տեսունեց և 'ի գերինչ խորհրդոց. և զերկիւղ դատաստանի քո տպաւորեա՛ 'ի սրտի իմում, անզբաղ յօժարութեան միոք փութալ և պահել զպատուիրանս քո։

(ԽԵ)

Փակեա՛ տէր զդուռն մեղաց իմոց. և բա՛ց ինձ զդուռն լուսոյ և արդարութե՛. զի երկիւղալից սիրով եկից զհետ իմոյ արարչիդ։ Որ ասացեր՝ եկա՛յք առ իս ամ՟ աշխատեալք։ Նաև դարձեալ թէ՝ որ խնդրէ, առնու. որ հայցէ, գտանէ. և որ բաղխէ՝ բացցի նմա։

(ԽԶ)

Նայեաց տէր ՚ի մերկութիւն անձին իմոյ՝ զոր կողոպտեաց թշնամին. եւ այժմ խայտառակ եւ ամօթալից կամ առաջի քո։ Մ՚արդասիրեա՛ եւ զգեցո՛ ինձ հանդերձ. մո՛յծ եւ ուրախացո՛ ՚ի կոչումն բազմելոց քոց։

(ԽԷ)

Զգեցո՛ ինձ տէր զպատմուճանն զառաջին զոր մերկացայ մեղօք իմովք. ցո՛յց զանոխակալութիւնդ քո յիս եւ լուսափայլ ողորմութեամբ քո զարդարեա՛ զմերկութիւնս իմ։

(ԽԸ)

Լո՛ւր տէր աղաղակի անառակիս՝ որ ամօթով կամ առաջի քո. զգանձ հայրենի վատնեալ՝ սովամահ կորնչիմ. կերակրիլ հաւասար եղէ խոզից անասնոց եւ նմանեցայ նոցա։

(ԽԹ)

Մ՚ի մերժեր զիս տէր ՚ի հայրենի գրթոյ քո. համարձակիմ ՚ի խնամ սիրոյ քո. ՚ի ծնողէդ վերջացայ՝ եւ զորդիութիւն իմ ուրացայ։ Հա՛յր՝ մեղայ յեր-

14046-58
1008 / 3862

ԹԵՏՍԱՆ ԳՐ. ...
ГОС. КНИЖ...
ՀՍՍՌ-Арм ССР

կինս և առաջի քո. չեմ արժանի կոչել որդի քո. արա՛ զիս իբրև զմի ՚ի վարձկանաց քոց։

(Ն.)

Օ արդարեա՛ զիս տէր մեծաւ երկիւղիւ քո. և դարձո՛ յանառակութենէ ՚ի յարդարութիւն. յաղտեղութենէ ՚ի սրբութիւն. ՚ի ծուլութենէ ՚ի զգաստութիւն. ժուժկալութեամբ գնալ ՚ի ճանապարհս քո ուղիղս։

(ՆԱ.)

Դադարեցո՛ զիս տէր ՚ի չարաչար խորհրդոց իմոց. և յառնելոյ զկամս մտաց իմոց և մարմնոյ իմոյ. զահագին օր գալստեան քո տէր նկարեա՛ առաջի աչաց իմոց. դողալ և սարսիլ ՚ի դատաստանաց քոց։

(ՆԲ.)

Պայծառացո՛ տէր զլապտեր հոգւոյ իմոյ որպէս կուսանացն իմաստնոց. և շնորհեա՛ պատրաստիլ արթնութեամբ՝ ընդ առաջ ելանել երկնաւոր փեսային. զի մի՛ մնասցուք արտաքս որպէս յիմար կուսանքն։

(Ծ՟Գ)

Ծանո՛ Տէր ինձ զճանապարհս քո եւ
ուսո՛ ինձ զարդարութիւնս քո. հեռա-
ցո՛ Տէր զմարմինս իմ ՚ի խորհրդոց
չարեաց՝ եւ հաստատեա՛ յերկիւղ բար-
եաց. սուրբ եւ անարատ կեալ առաջի
քո յամենայն ժամ։

(Ծ՟Դ)

Զանօրէնութիւնս իմ ջնջեա՛ Տէր. ՚ի
լոյս բարեաց եւ յերկիւղ քո զմիտս իմ
բեւեռեա՛ լցեալ սիրով սպասել եւ ա-
կըն ունել մեծի գալստեան քո.

(Ծ՟Ե)

Զօրացո՛ զիս Տէր ՚ի պատուիրանաց
քոց՝ անսալ երկիւղիւ. դողալ եւ սարսել
՚ի դատաստանաց քոց. խնդրել զար-
դարութիւն եւ զիրաւունս երեսաց քոց.
առնուլ զպարգեւս շնորհաց քոց։

(Ծ՟Զ)

Արձակեա՛ զիս Տէր ՚ի կապանաց մե-
ղաց իմոց. եւ զհնացեալս մեղօք՝ վե-
րստին նորոգեա՛. եւ զխաւարեալս ՚ի
ցանկութենէ մարմնոյ լուսաւորեա՛
գնալով ՚ի ճանապարհս խաղաղութե՛ն.

զի տեսցեն աչք իմ զփրկութիւն քո՝
զոր պատրաստեցեր օրբոց քոց։

(ՆԱ)

Բժշկեա տէր զանբժշկելի հիւանդութիւնս իմ․ որ կարկամեալ դնիմ՝ ՚ի մահիճս մեղաց իմոց, և դեգերեալ կամ ՚ի դուռն երկրորդ սեղովմայ․ սպասել և ակն ունիլ մեծի գալստեան քո։

(ՆԲ)

Հրամայեա տէր ինձ որպէս զանդամալուծին առողջանալ․ խորտակել զանկողինս ցաւոց իմոց․ շրջիլ ընդ կամարարս քո․ ՚ի տան տեառն և ՚ի գաւիթս աստուծոյ ծաղկիլ և ոչ մեղանչել։ Խորտակեա տէր զբռնութի՛ւն սատանայի․ հատ և ՚ի բաց ընկեա զզօրութիւն նորա․ արգել զյարձակումն նորա ՚ի վերայ իմ․ զի տարապարհակ վարեալ զմարմինս իմ, տանի ընդ արձակութիւն ճանապարհի՝ որ տանի ՚ի կորուստ և յապականութիւն։

(ՆԳ)

Յիշեցո տէր զբաղեալ և մոռացեալ մտաց իմոց զահաւոր և զսոսկալի

դատաստան քո. զպատիւ և զփառսն արդարոցն. և զանմներելի տանջանսն մեղաւորացն. և նոքօք զարհուրեալ դողայց զմարմինս իմ տեսանել զմահ հանապազ առաջի աչաց իմոց:

(Կ)

Ուսուցեա տէր զմարմինս իմ ընդ երկիւղ քո. և ընդ տէր պատուիրանաց քոց. և զհրամայեալսն ՚ի նմա՝ երկիւղի լսել. առանց ձանձրութեան կատարել միշտ՝ և մերկանալ ՚ի մեղաց և ՚ի ցանկութեանց կենցաղոյս. և պայծառանալ վարուք առաքինութեան:

(ԿԱ)

Փրկեա տէր ՚ի զաղտնաձիգ նետից սատանայի. որ բազում մեքենայիւք պատել պաշարէ զիս: Աւար առեալ զմիտս իմ: վարէ ՚ի գերութիւն ցանկութեան մեղաց. առնելով ծաղր և այպն կատականաց թշնամեաց:

(ԿԲ)

Ամրացո զիս տէր յերկիւղ քո. և զօրացո զօրութեամբ քո. զհիւանդութիւն հոգւոյ իմոյ առողջացո. և զցաւս մարմնոյս բժշկեա

և զջերմութիւն սրտի քո հաստատեա՛ 'ի սրտի իմում. չարչարակից լինել սրբոց քոց։

(ԿԳ.)

Դարձո՛ զգերեալս 'ի սատանայէ. և զմեղօք վաճառեալս եգիպտական և խիստ տանջանայն՝ փրկեա՛ 'ի բռնակալ չար սպասաւորաց դիւային. և յեղեգնակոխ մեղացն հանցես՝ և արկցես զնա յերկիրն աւետեաց։

(ԿԴ.)

Ընկղմեա՛ տէր զթշնամին իմ ընդ զօրութիւն փարաւօնի. զի սպառնացեալ 'ի վերայ իմ խորոխտայ. դարձուցանելով զնա յառաջին յանցանսն ընդ իշխանութեամբ իւրով ծառայել մեղաց և անօրէնութեանց։

(ԿԵ.)

Օերծո՛ զնա տէր 'ի լերինս քարանձաւի. կամ 'ի տեղի անապատի. ուր և ողորմութիւն քո առաջնորդեսցէ ինձ, հանդիպել մեծի փառաց անուան քո. տալ ինձ զթեւս աղաւնակերպ հոգւոյդ սրբոյ՝ թռչել և վերանալ խառնել յերամս արդարոցն։

(ԿԶ.)

Ժառանգեցո՛ զիս տէր յօթեւանս արդարոց քոց. և զհանգիստ աշխատութեան սուրբ հարցն պարգեւեա՛ ինձ. անտե՛ս արա զյանցանս իմ և դասաւորեալ պայծառացո՛ ընդ սուրբս և ընդ սիրելիս անուան քո։

(ԿԷ.)

Հաստատեա՛ տէր զխաղաղութիւն և զպայծառութիւն լուսոյ կենաց անձին իմոյ. զի մի խոտորեցայց յաջ կամ յահեակ. և դատապարտիմ յաւուր գալստեան քո՝ պահանջելով զյետին նաքարակիտն մինչ իսպառ։

(ԿԸ.)

Մի՛ մերժեր զիս 'ի բազմագութ ողորմութեանց քոց. զապաւինեալս 'ի քեզ ամրացո՛ աներկիւղ պահելով յամենայն որոգայթից սատանայի. զի մի՛ գերի վարեալ տանիցէ զմիտս իմ 'ի զբաղումն և 'ի չար ծառայութիւն։

(ԿԹ.)

Ուսո՛ զիս տէր առնել զարդարութի՛ն. խօսել զճշմարտութիւն. սիրել զսրբու-

թիւն, և ատել զաղտեղութիւն. խոտորել 'ի չարեաց, և գնալ 'ի ճանապարհս բարեաց։

(Ժ.)

Աղերսեմ զքեզ տէր յորսողաց` որք գան 'ի վերայ իմ, ըմբռնել զիս 'ի մեղս և 'ի ծուլութիւն անժուժկալութեան. մոռացումն առնել յանցանաց իմոց. և ո՛չ տալ յիշել զօր հատուցման. և ըղսարսելի պատասխանն որ ասէ. երթայք յինէն անիծեալք 'ի հուրն յաւիտենից։

(ԺԱ.)

Կանգնեա զիս տէր 'ի գլորմանէ. և 'ի բազմամեղ անդնդային խորութենէ վերացո և բարձրացո թևօք Հոգւոյդ սրբոյ 'ի խնդրուածս հաճոյից. 'ի նորոգումն և 'ի լուսաւորութիւն մտացս. 'ի ջնջումն մեղացս. և 'ի կատարումն սուրբ պատուիրանաց քոց։

(ԺԲ.)

Խնդրեմ տէր զեղծեալ և զկորուսեալ քո պատկերս` որ 'ի մէջ աղբի և տղմի մեղաց փակեալ կայ։ գիտ ածեալ ա-

ւելաւ շնորհի քո և դիր 'ի գանձա-
նակն առաջին յորմէ անկաւ։

(ԺԳ.)

Ն՛կ տէր 'ի տեսութիւն հիւանդացեալ հոգւոյ իմոյ· դիր զձեռն քո 'ի վերայ իմ· բժշկեա ասելով· զօրացիր առ ըմ- մահիճս քո, և երթ 'ի տուն քո արդարութեան։

(ԺԴ.)

Ն՛կ տէր 'ի խնդիր մոլորելոյս՝ որ յածեալ շրջիմ արտաքոյ հօտի պատուիրանաց քոց· գայլաբեկ եղեալ և քարավէժ մեղօք կոտորեալ 'ի դիւաց· ըմբռնեա և ած 'ի փարախ հայրենի և խառնեա 'ի գառինս հօտի քո։

(ԺԵ.)

Տեսանես տէր զհետ ձողոպրելոյս 'ի քէն· արագապէս փութացիր· հաս և ըմբռնեա զապստամբեալս 'ի ձայնէ կոչման քո· և դիր 'ի բանդ կապանաց անխզելի սիրոյ քո։

(ԺԶ.)

Մ՛ի թողուր զիս տէր հեռանալ 'ի սիրոյ պատուիրանաց քոց՝ և 'ի փարոց

առաքինութեանց. այլ յորդորեա՛ ա-ռաւելուլ յամենայն գործս արդարութե՛. առանց մեղաց և առանց իւիք խա-փանուածոց պաշտել զքեզ սրբութ՟ և արդարութեամբ առաջի քո զամե-նայն աւուրս կենաց իմոց։

(ՃԷ.)

Մ՛ի մատներ զիս տէր 'ի ցանկութ՟ի մեղաց. 'ի քուն աչաց և 'ի ցանկութ՟ի մտաց. այլ պարսպեա՛ երկիւղիւ. և ապ-րեցո՛ յամենահնար չար դիւացն և յաշ-խարհական զբօսանաց։

(ՃԸ.)

Մ՛ի յապաղեր տալ ինձ զփրկութիւն հոգւոյ և զջերմութիւն սիրոյ. զկերա-կրոյ պարկեշտութ՟ի և զմարմնոյ ժուժ-կալութ՟ի. զարտասուաց բղխումն. զան-դադար աղօթս. զհնազանդութիւն. և զհամբերութիւն յուսոյ։

(ՃԹ.)

Յաղթեա՛ մ՟ր հակառակամարտին իմոյ. և զօրացո՛ զիս ընդդիմակաց լինել պա-տերազմողին 'ի վերայ իմ. և զգեցո՛ ինձ զզրահն հաւատոյ. պահօք և աղօթիւք

սրբել զաղտս ցանկութեան և զխոր-
հուրդս մարմնական. և առնուլ զշնորհս
փրկական։

(Զ)

Տուր ինձ տէր տեղի ապաշխարութե.
աշխատութեան հանգիստ. խայղուե
հոգւոյ. և արդարութեան ճանապարհ.
ամրութեան զէն. հաստատութեան
յոյս. և պնտութեան երկիւղ։

(ԶԱ.)

Անցո զիս տէր ընդ անհուն անցից
մեղաց՝ խորաթուիչ ծովահեղձ ցան-
կական կենցաղոյս և շնորհեա ինձ 'ի
լոյս աչացս՝ և 'ի մտացս տեսութիւն.
ի հանգիստ կենաց. 'ի հանդիպումն շնոր-
հաց. 'ի շաւիղս ճանապարհացն արդա-
րութեան։

(ԶԲ.)

Շնորհեա ինձ տէր լալ աչացս. արտա-
սուաց հոսումն. մեղաց սուգ. մտաց սրտի
երկիւղ. ոսկերաց իմոց սարսափումն և
դողումն վասն տանջանաց. կենաց ճա-
նապարհ. և անդադար պաշտաման։

(ՁԳ․)

Արիացո՛ զիս տէր ՚ի պատուիրանաց պահպանութիւն. որով յայտնի ժուժկալութիւն ՚ի մարտ պատերազմի. բանսարկուին յաղթութիւն. ՚ի մարմնի մեռանիլ և պայծառանալ ՚ի հանդիսի.

(ՁԴ․)

Կեցո՛ զիս տէր երկիւղիւ և դողջմամբ. արտասուօք և հառաչանօք. սիրով և սրբութեամբ. շնորհօք և ճշմարտութեամբ. գիտութեամբ և ամենայն առաքինութեամբ։

(ՁԵ․)

Ջնջեա՛ տէր զբազմութիւն մեղաց իմոց և թափեա՛ զմրուր դառնութեան յանցանացս. և պարարեա՛ զոսկր իմ արբմամբ սուրբ Հոգւոյդ. և զփշաբեր մարմինս իմ լցո՛ շնորհօք. զարգացո՛ և ՚ի պտղաբերութիւն փոխարկեա՛։

(ՁԶ․)

Նորեցո՛ տէր զշնորհս քո՝ զգութ և զողորմութիւնս քո ՚ի պաշտօնեայս քո. և տաճարացո՛ զիս բնակարան լինել

ամենասուրբ Հոգւոյդ. մի ևս ծառայել մեղաց և ապականութեանց։

(ՁԱ.)

Բժշկեա զիս Տէր ՚ի հպարտութենէ և յամբարտաւանութենէ. ՚ի մնափառութենէ. ՚ի մարդահաճութենէ և յոխակալութենէ. ՚ի նախանձու և ՚ի յատելութենէ և յամենայն չարութենէ։

(ՁԲ.)

Փրկեա զիս Տէր ՚ի մարդկայնոց գովեստից ՚ի փառաց և ՚ի մեծարանաց. լոյս կարծելով զխաւարս՝ համբաւեն ՚ի վերայ իմ բարի՝ զեղկելիս և զողորմելիս։ Համբաւեն զիս առաքինի. և ես եմ արտաքսելի և անթիւ մեղօք լի։ Ծածկեա զիս ՚ի լուսոյ սուտ գովութեանց և երանութեանց. զի ոչ գիտեն զմեղս իմ։ Երևիմ սրբութեամբ՝ և լի եմ աղտեղութեամբ. կերպարանիմ առաքինութ՟՝ և կեամ անառակութեամբ. փայլիմ երկիւղածութ՟՝ և վարիմ մարդահաճութեամբ. Ճանաչեմ զճշմարտութիւն՝ և խօսիմ զստութիւն. գիտեմ զարդարութիւն՝ և գործեմ զանօրէնութիւն։

(ՁԹ.)

Քաւեա՛ զիս տէր 'ի մեղաց և 'ի բամբասանաց. և թո՛ղ ինձ զանժուժկալութիւն և զծուլութեանն. զորկորստութեանն և զդատարկաբանութեան. զցանկութիւն ատելութեան. զհայհոյութիւն և զամենայն բիծս չարեաց։

(Ղ.)

Կացո՛ զիս տէր հաստատուն անշարժ 'ի տեղի փորձանաց պատերազմի. առանց երկիւղի քաջ և պինտ հաւատով և յորդորական սիրով՝ զօրաւիգ լինիլ ընդ եկելոց դիւացն 'ի վերայ իմ. զինեա՛ զիս ամրական զինու քո՝ տալ պատերազմ և յաղթել թշնամւոյն հակառակամարտի. որ կամի իսպառ զիս որսալ։

(ՂԱ.)

Զընկղմեալս տէր 'ի խորս մեղաց հանցես և բերցես 'ի լոյս պատուիրանաց քոց. և առ քեզ կոչեսցես զհեռացեալս 'ի քէն. և թողցես զգործս իմ՝ անառակութեան. զապաւինեալս 'ի քեզ մխիթարեսցես. զարձակեալս 'ի կապոյ

պատուիրանաց քոց՝ ըմբռնեմ զ լուծ սիրոյ քո։

(ԳԲ.)

Օ գութ սիրոյ քո տէր միաւորեա յիս. և զարգելեալս ՛ի կապանաց բանտի՝ արձակեա. և խզեա զկապանս մեղաց իմոց. առաջնորդեա ինձ ՛ի ճանապարհ. և տեղի յարկից պատրաստեա. և պսակեա ընդ սուրբս քո։

(ԳԳ.)

Հաղորդս արա զիս տէր աստուածային սիրոյ քո. սիրել զպատուիրանս քո և գնալ ՛ի ճանապարհս քո. չարչարիլ մինչև ցմահ վասն անուանդ քո. մտանել ՛ի փառս և դասիլ ընդ սուրբս քո. և ուրախանալ միշտ ընդ կամարարս քո։

(ԳԴ.)

Գթա ՛ի մեղուցեալ և յեղկելի անձն իմ տէր. խափանեա զանառակ ցանկութիւնս իմ: սրբեա զաղտեղութիւն մեղաց. և քաւեա զանօրէնութիւնս իմ: բժշկեա զվիրաւորեալ հոգիս. և առողջացո զհիւանդացեալ մարմինս իմ. ցրուեա զչարն յինէն. և ժողովեա

զբարիս և լից զպակասութիւնս իմ:

(Պ Ա·)

Առաջի քո անկանիմ և խնդրեմ ըզ թողութիւն մեղաց իմոց. զպաշտամանս իմ ընկալ. և քաւիչ լեր յանցանաց իմոց. պայծառացո և լուսաւորեա ըզխորհուրդս և զմիտս իմ. կարողացո ըզմարմինս իմ անդադար կալ 'ի փառաբանութիւն անուանդ քում սրբոյ:

(Պ Օ·)

Օանկեալս մեղօք կանգնեա տէր և զխոցեալս 'ի թշնամւոյն դեղատուեա. բարձ զցաւս մեղաց և վերացո ըզկսկիծ յանցանաց. յափշտակեա 'ի դառըն մահճաց. և ազատեա յանողորմ տանջանաց. 'ի մարմնական կրիանաց հեռացո և 'ի դասս ձգնաւորացն դասեցո:

(Պ Լ·)

Լեր վերակացու և պահապան անձին իմոյ ով տէր իմ Յիսուս. պահեա զիս 'ի դիւաց. և փրկեա զիս 'ի մարդկային փորձանաց: Հակառակողաց յաղթեա և կացո զիս 'ի մէջ պատերազմո

ղաց քաջ և ընտիր լինիլ գործակցեմ ինձ լինիլ քաւարան մեղաց՝ և համբերել վշտաց. առաքինաջան գործովք հանդիպիլ քում աստուածային շնորհացդ։

(Գ.Ը.)

Վայ ինձ տէր՝ վայ ինձ. զի մեղօք կործանեցայ. և մտօք իմովք աղտեղեցայ. ՚ի բարեաց ունայնացայ՝ և ՚ի սիրոյ ցամաքեցայ. ՚ի լուսոյ խաւարեցայ՝ և ՚ի գնալոյ դադարեցայ։ Ո՛չ ունիմ աչս լալոյ և արտասուաց. ծփիմ տարակուսեալ. զի յոյս և ակն բարեաց ո՛չ ունիմ։

(Գ.Թ.)

Կանգնեամ տէր զտարաբերեալ անձն իմ որ լի եմ մեղօք և անթիւ յանցանօք. և խարշեալ և տրոհեալ եմ ամենայն անդամօքս. յոտից մինչև ցգլուխս ապականեալ. և չիք հնար բժշկութե՟. եթէ ո՛չ ՚ի քէն տէր իմ Յիսուս. խոնարհեամ առ վիրաւորեալս դեղատուութք. և մի դարձիր ՚ի չարահոտ ախտացելոյս։

(Ժ՛)

Հեռացո՛ տէր զբերան իմ 'ի բամբասելոյ. և զլեզու իմ 'ի չար խօսելոյ. զականջս իմ 'ի չարալուր լսելոյ և զձեռս իմ 'ի յափշտակելոյ. և զոտս իմ 'ի յանաւակ գնացս երթալոյ. և զամենայն անդամս իմ զգաստացո՛ միշտ զհաճոյս քո կատարել:

(ԺԱ.)

Մեղայ քեզ տէր մեղայ. զի յանցեայ զպատուիրանաւ քով. 'ի լուսոյ կենաց ելայ՝ և մտայ 'ի խաւար մեղաց ցանկանալով աղտեղութեանց: 'Ի սիրոյ քո հեռացայ՝ ըմբռնեցայ 'ի չարէն. և եղէ որդի կորստեան. ողորմեա՛ ինձ բազմամեղիս բարերար՝ զի դու միայն ես մարդասէր.

(ԺԲ)

'Ի քեզ տէր ապաւինիմ. որ քաւարան ես մեղաւորաց. և փախուցելոյս դարան. արա՛ փախստական զթշնամին իմ: Օգնական զայլ ոք ոչ ունիմ. բայց զքեզ միայն ունիմ պահապան անձին իմոյ 'ի վտանգից փրկեա. 'ի յորոգայ-

թից ապրեցո՛. և արժանի՛ արա զիս
լինել որդի յարութեանն.

(ԻԳ.)

Ողորմեա՛ ինձ Տէր կենաց և քաւիչ մեղաց. կատարիչ խնդրուածոց և արձակիչ կապելոց. բաշխօղ պարգևաց և տուիչ ամենայն շնորհաց:

(ԻԴ.)

Լո՛ւր Տէր զաղաչանս իմ. և ընկա՛լ զպաղատանս իմ. քաւեա՛ զյանցանս իմ. և կատարեա՛ զխնդրուածս իմ. արձակեա՛ զկապանս իմ; և բժշկեա՛ զհոգի իմ. առողջացո՛ զմարմինս իմ, և ուղղեա՛ զգնացս իմ. փութացո՛ զիս ժամանել յօթևանս սրբոց քոց.

(ԻԵ.)

Հալածեա՛ Տէր զբազում ախտաժետութիւնս իմ. զցաւս ՚ի մարմնոյս՝ և զաղտ ՚ի հոգւոյս. զքուն ՚ի գլխոյս՝ և զյագումն որկորոյս. Պահեա՛ զխորհուրդս իմ անզբաղ. զսիրտս իմ սուրբ. և զմիտս իմ լուսաւոր. զցանկութիւնս՝ առ քեզ. և զյօժարութիւնս՝ յաղօթս ՚ի տուէ և ՚ի գիշերի.

(Ճ՛Օ.)

Բղխեա տէր 'ի գլուխ իմ աղբիւր վտակաց. և զանդս մտաց իմոց ոռոգեա. և զաղտ յանցանաց իմոց լուա. և սրբեա զթարախ վիրաց իմոց. զփուշ մեղաց իմոց խլեա և տնկեա զբոյս կենաց. Աճեցո տէր զարդարութիւն՝ և նուաստացո զանօրէնութիւն. մեռո զմարմնոյ ցանկութիւն՝ և նորոգեա զհոգւոյս կենդանութիւն։

(Ճ՛Ի.)

Կոչեա տէր զմեղուցեալ անձն իմ 'ի քեզ. զի մերձենալ առ քեզ ոչ իշխեմ։ պատկառիմ յամօթոյ՝ և զարհուրիմ 'ի գործոց իմոց. ոչ ունիմ առ քեզ համարձակութիւն՝ զի ես ինձէն եմ կորուսեալ 'ի՝ սուրբ պատուիրանաց քոց հեռացայ՝ և մերկացայ 'ի փառաց քոց. այլ դու տէր գթած լեր և ողորմեա. զի ստեղծուած եմ անարատ ձեռաց քոց։

(Ճ՛Ւ.)

Ոչ իշխեմ տէր անյոյս լինել. զի ողորմած ես գթած. և փառս անճառ խոստացար դարձելոց մեղաւորաց. այլ ես զարհուրիմ և դողամ. և երկնչիմ 'ի բազում և յանթիւ մեղաց իմոց. զի

պատրեալ խաբեցայ յորսողէն. և արդ զի՞նչ լինիմ եղկելիս՝ որ տարակուսեալ եմ 'ի կենաց։

(ՃԹ.)

Արկ զիս տէր 'ի սուգ և յարտասուս վասն մեղաց իմոց. զի ծանրացեալ եմ անօրէնութեն բեռամբ՝ և յագեալ աղտեղի խորհրդով. շատ ներեցեր ինձ զի ոչ խրատեցեր զիս 'ի մարմնի. արդ սարսեալ դողամ, թէ ոչ մնան ինձ այսպիսի չարիք։ Ողորմեա՛ բարերար տէր՝ մի կոչեր զիս յատեանն. և տանջանաց մի մատներ զիս. այլ փրկեա 'ի հրոյ դեհենին. և 'ի վտանգից ապրեցո՛. և ողորմեա ինձ. զի դու միայն ես մարդասէր.

(ՃԺ.)

Վա՛յ ինձ տէր՝ զի ծփանք տարակուսանաց պատեն զիս. և սիրտ իմ խռովեալ. զոր աղօթեմ ոչ գիտեմ։ Աղա-մոսեմ և ոչ իմանամ. շրթունք իմ բարբառի՝ և միտք իմ ձողոպրեալ յածի այսր և անդր և զկայումն ոչ ունի։ Ես կամիմ զի իցէ անդ՝ բայց ոչ դա-

դարի. ո՛չ տեսանի արդեօք և ո՛չ ըմ-
բռնի. զուր աշխատիմ և ո՛չ ինչ օգ-
տիմ. որպէս ձայն հնչեալ պղնձի և
ծնծղայի՝ թափուր և ունայն դատիմ. և
անպտուղ գտանիմ յամենայն բարեաց։

(ՃԺԱ.)

Ընկա՛լ տէր զմոլորեալս որ փախու-
ցեալ կամ ՚ի լերինս. որպէս ծառայ
չար ՚ի տեառնէ հալածեալ վասն մե-
ղաց։ Ես ՚ի սուրբ եղբարց հրաժարեալ
եմ. ՚ի սուրբ պաշտամանց հեռացեալ.
զի սիրող էի մեղաց՝ և նախատինք կր-
րօնաւորաց. անյագ ՚ի մեղաց և ՚ի զըր-
կանաց։ Անգութ էի աղքատաց՝ և
հակառակ սպասաւորաց. անողորմ էի
հիւանդաց՝ և անմխիթար աշխատողաց.
չէի իսկ արժանի կալ ՚ի մէջ ճգնա-
ւորաց։

(ՃԺԲ.)

Հանգո՛ տէր զշնորհս Հոգւոյդ սրբոյ
՚ի վերայ իմ. որ միայն եմ ՚ի պատե-
րազմի առանց օգնականի։ Սրբեա՛ տր
զտաճար հոգւոյ իմոյ՝ և առ իս լեր ը̅
երեկոյս. Բա՛ց զաչս հոգւոյ իմոյ՝ և

լուսաւորեա՛ ըզ միտս և զխորհուրդս իմ.
Տո՛ւր ինձ զօրութիւն տէր իմ Յիսուս
և ընկա՛լ զօրհնաբանութիւն բե-
րանոյ իմոյ. 'ի խոր քնոյ գիշերոյ
զարթո՛ զիս գոհանալ և օրհնել զքեզ՝
որով զմեղս իմ քաւեցի.

Շնորհեա՛ ինձ սուգ և արտասուս լա-
լոյ և սգալոյ. և անդադար աղօթելոյ
առաջի քո.

(Ճ՛ԺԳ)

Դատեա՛ տէր զդատապարտօղն իմ որ
յանդգնի 'ի վերայ՝ մարտ եդեալ ըն-
դէս ցանկութե՛բ և անժուժկալութե՛բ.
ծուլութեամբ և որկորստութեամբ.
փառասիրութեամբ և մարդահաճու-
թեամբ. բարկութեամբ և սրտմտու-
թեամբ. ատելութեամբ և չարաչար
հայհոյութեամբ. սնափառութեամբ և
մտապարծութեամբ. հպարտութեամբ
և անպարտաւանութեամբ. բանիւք և
գործովք և խորհրդովք զօրաժողով
լինիլ 'ի վերայ իմ. և ընկղմէ զիս 'ի
խորս չարեաց.

(ՃԺԴ)

Սփռեա՛ տէր զշնորհս քո ՚ի վերայ մասանց անդամոց իմոց. լցո՛ տէր զմարմինս իմ արիութեամբ և ժուժկալութեամբ. և զհոգիս իմ երկիւղիւ և դողութեամբ. զսիրտ իմ սիրով և արդարութեամբ քո, և զմիտս իմ լուսով և իմաստութեամբ քո. զխորհուրդս իմ հանձարով գիտութեան քո, և զոտս իմ գնալ ՚ի շաւիղս արդարութ՟ե. և ըզբերան իմ անդադար սաղմոսել քեզ գոհութեամբ և օրհնութեամբ. զաչս իմ յորդաբուղխ արտասուօք. և ըզհոտոտելիս իմ հոտոտել զհոտ գիտութ՟ե ՚ի կեանս. զլսելիս իմ լսելով զձայնն աւետեաց որ ասէ. թողեա՛լ լիցին քեզ ա՟մ մեղք քո։

(ՃԺԵ)

Մինչև յե՞րբ անսաս տէր չար գործողին. որ ո՛չ յագի իմով կորստեամբ. այլ հանապազ սկիզբն առնէ չարեաց. և ՚ի բաց կորզեալ խափանէ զիս ՚ի բարեաց և յառաքինութեանց. և հեռացուցանէ զիս ՚ի սրբութեանց. և ՚ի

յաւիտենից կենաց արտաքս հանէ զիս․ Խաւարեցուցանէ զլուսաւորութիւն աչաց․ և ապականելով գերէ զմիտս իմ: և վարէ զիս 'ի չար ծառայութի՟ն յանցանաց· 'ի ձեռս անօրէն դահճացըն մատնէ զիս․ և տանի 'ի տեղի չարչարանաց․ և արկանէ 'ի բանտ կապանաց մահու․ կացուցանէ 'ի մէջ խաւարասէր սպասաւորաց․ և 'ի տուռնս մեղաց կապէ զիս․ և արդ՝ ես եղկելիս զի՞նչ լինիցիմ․ եթէ ոչ դու տէր օգնես ինձ։

(ՃԺԶ)

Տե՛ս տէր զլալիս և զողբալիս զպաղատելիս և զեղկելիս․ ինձ ողորմեա անօրինելոյս․ և շնորհեա ինձ յորդ արտասուս 'ի գիշերի, և նշոյլ շնորհաց քոց յաւաւուրի։ Լուաց զխաւարեալ աչս սրտի իմոյ՝ և բժշկեա զհիւանդացեալ հոգիս իմ: ընկալ զդարձ մեղաւորիս և մի բարկանար բազմամեղիս տէր իմ Յիսուս․ և քանզի անթիւ ունիմ զչարիս՝ ջընջեա յինէն և տուր ինձ զշնորհս բարեաց։

(ՃԺԷ)

Համարձակիմ տէր աղօթել առ քեզ·

խնդրեմ և ո՛չ իմանամ. զօգտակարն հոգւոյս յայտնեա՛ ինձ ո՛ղորմած տէր զկամս բարիս. և ուսո՛ ինձ զպատուիրանս քո. Ո՛ բարիս՝ զոր ո՛չ խնդրեմ և իմանամ տէր ինձ տուր. և եթէ ո՛չ գործեմ զբարիս, բարի՛ արա ինձ տէր. և եթէ ոչ խնդրեմ զողորմութիւն, ողորմութիւն շնորհեա՛ ինձ տէր. և ըզհեռացեալս առ քեզ կոչեա՛. և եթէ ո՛չ կամիմ, բռնաւորեա՛ և 'ի քեզ կորզեա՛. և եթէ ո՛չ կամիմ, դարձո՛ զիս. և եթէ ըմբռնիմ յումեքէ , զերծո՛ զիս . եթէ յերկրաւորս զբաղեցայ՝ 'ի խորհուրդս հոգևորս զբաղեցո՛ զիս . եթէ այսր և անդր գնալ ցնդիմ, մի՛ թողուր զիս մինչև ըմբռնեալ տարցես 'ի տեղի յարկի փառաց քոց ։

(Ճ՛ԺԴ)

Մ՛ի հայիր տէր իմ յեղկեալ սիրտս և 'ի զազրատէր մարմինս. զի հող եմ և մոխիր. սիրեմ զերկրաւորս և ո՛չ փափագիմ նայել յերկնայինսն. այլ միշտ հեշտանամ 'ի չարիս. և ո՛չ տեսանեմ

զանվախճան փառսն։ Նաև ոչ յիշեմ զգա-
ռաջին մր հարսն զերանելին. այլ 'ի
տիղմն աշխարհիս թաւալիմ. և ոչ մաք-
րեալ վերանամ դասիլ ը̃ առաքինիսն։
Նաև զի մոռանամ զերկնից դատաստա-
նին. և ոչ դողամ յահագին դառն
տանջանացն՝ որ կայ պահեալ մեղաւո-
րաց. և ես ծուլանամ անհոգ լինելով
'ի փրկութենէ կենաց. շնորհեա ինձ տր̃
սուգ և կոծ անհանգիստ. և արտասուս
ապաշխարանաց. (ՃԺԹ.)

Ահ յանդիմաներ զիս տէր յաւուրն
մեծի ահեղին. և մի յատենի հրապա-
րակին կացուցաներ զիս ամօթալի. և 'ի
տեղի ատենի մի խայտառակեր զիս. և
մի կշտամբեր յատեան դատաստանին.
և մի թողուր ինձ զոչ զխտեմն լսել. և
զահաւոր բարբառն ահաբեկ՝ որ ասէ.
երթայք յինէն 'ի հուր գեհեննին.
Նաև մի 'ի բաց մերժեր ընդ վատ և
ընդ չար ծառայի. և 'ի ձեռն անօրէն
կապողի մի մատներ զիս. և մի տար կե-
րակուր որդանց թունաւորաց 'ի մէջ
բորբոքեալ բոցոյ և մի արկաներ զիս

՚ի խաւար սառնամանեացն տարտա-
րոսին Բոյլ փրկեա՛ զիս ՚ի սաստիկ կոյ-
ծականաց հրոյ․ ՚ի բոցեղէն գետոց ար-
շաւանացն․ ՚ի սաստիկ լալագին և խիստ
տանջանացն․ և յողբոց տարակուսանաց․
՚ի կափկափելոյ ատամանցն և ՚ի սար-
սռելի կսկծանաց․ ՚ի տոչորմանէ խա-
ւարային բոցոյն, և ՚ի դժնդակ դառն
աղէտից խորովելոյն․ ՚ի բոցածաւալ և
՚ի շրջապատ հրոյն․ և ՚ի կողկողաձայն
և յանդադար վայոյն փրկեա՛․ և ազա-
տեա՛ զիս Տէր։

(ԼԱ)

Բազմացաւ եր անօրէնութի՛ ՚ի վերայ իմ,
իբրև զբեռն աղի կամ կապարի՝ բազում
է ախտ ՚ի հոգիս իմ․ և անխտիր եմ
՚ի մեղս մարմնոյ․ և զանազան չարեօք
լցեալ եմ։ Բայց այլ ինչ ունիմ վատ-
թարագոյն՝ զանզղջութիւն մարմնոյ՝
որ քան զամենայն չարիս է դառնա-
գոյն․ և զի յաղօթելն իմում ձանձրա-
նամ։ և ՚ի սաղմոսելն ոչ իմանամ։ ՚ի
խնդրել զերանութիւն պղերգանամ․
և յերկիւղէ շնորհաց դատարկանամ։

տկարանամ մարմնովս և արձան աղի
սիրտ իմ լինիլ և ոչ ծաղէ 'ի նեղս
լոյսն անշիջանելի. և յաւուրն չարի ոչ
սարսեալ դողամ.

(ՃԻԱ.)

Շնորհեա ինձ տէր՝ երկիւղ սրբու-
թեան և սգոյ. և յորդորեա առ իս աղ-
բիւրս արտասուաց. թեթևացո ըզ
ծանրութիւն բեռանց իմոց. և ածեցո
առ իս սուրբ աղօթս փութացիր տր
և եկ 'ի խնդիր մոլորելոյս. որ մեր-
ձեալ եմ 'ի վախճանկորստեան. վասն
զի խաւարեցայ 'ի լուսոյ. և 'ի սիրոյ
պատուիրանաց քոց խափանեցայ. 'ի
չար թշնամւոյն յաղթեցայ՝ և նուա-
ճեցայ յերկիւղէ քումմէ. Տապալեցայ
'ի չար խորհրդոց չարին՝ և ցամաքե-
ցայ 'ի շնորհաց արտասուաց սիրոյ քո.
խաբեցայ յունայն բանից՝ և 'ի լուսա-
ւորութենէ մնաց մոլորեցայ. աղտեղե-
ցայ մեղօք՝ և զօր վախճանին մոռացայ.

(ՃԻԲ.)

Տարակուսիմ անյոյս լինելով որ ոչ
գոյ հնար ապաշխարութեան. զի մար-

Ծնօղս տկարացոյ՝ պակասեալ 'ի զօ-
րութենէ. և ծերացեալ նուաղեցայ.
Սակայն 'ի քեզ ապաւինիմ տէր Յի-
սուս հասիր յօգնութիւն ծանրաբեռ-
նեալ ընկղմելոյս. և ազատեա զիս 'ի
չարեաց. որ ազատիչդ ես 'ի յանցանաց.

(ՃԺԳ.)

Ընկա՛լ տէր զձայն շաղփաղփ աղօթս
իմ: որ կամ առաջի քո դատապար-
տեալ: այլ և ծոյլ 'ի զգաստութենէ. մո-
լորեալ եմ 'ի մտաց և յերկիւղէ ու-
նայնացեալ եմ: Ներքին իմ այլ ընդ
այլոյ բաբբանջէ. աչք իմ պշնու. և
միտք իմ զբաղնու. ոչ անզբօս աղօ-
թեմ. և ոչ սրտի մտօք խնդրեմ: ոչ
հաւատով առ քեզ գոչեմ. և ոչ երկիւ-
ղիւ կարդամ: ոչ արտասուօք հայցեմ,
և ոչ դողամ և սարսիմ վասն աւուրն
պատասխանատուութեանն.

Ես արդ տէր՝ մի՛ անսար. այլ փութապէս
արկ յապաշխարութիւն և 'ի բոլոր մաքրութիւն
Հոգւոյ սրբեալ և ազատեալ 'ի մեղաց.
Անծաւ ջերմամբ եռացն և 'ի յոր-
դոր [illegible] և 'ի [illegible] և 'ի

խնդրուածս. և տպաւորեա յիս զառաջին լուսաւորումն կերպարանն.

(ՃԼԳ.)

Ողորմեա տէր մեղաւորիս՝ յանցաւորիս անմտիս բազմութեամբ և դարձո յապաշխարութիւն զզեղխս վտարանդեալ. և մուծ զիս յարքունական փառսն։ Առաջնորդեա ինձ զվերին ճանապարհին գալ առ քեզ. զի եթէ դու ոչ առաջնորդեսցես ինձ, ես ոչ կարացից գալ. զի դու ևս հրամայեցեր. եթէ ոչ ոք գայ առ իս՝ եթէ ոչ հայր իմ ձգեսցէ զնա։ Այլ արդ տէր իմ գթած՝ մի յիշեր զմեղս իմ յաճախ լրբութեանն՝ և զանց առներ ՚ի ծառայէս քումմէ. մի թողուր զիս մնալ ՚ի նոյն չարիս՝ և ՚ի կեանս աշխարհիս սպառիլ. այլ որպէս ընթացեալ զկնի ծառայի փախելոյ՝ այսպէս դարձուցանելով զիս թողցես զյանցանս իմ և արասցես հաղորդս սրբոց կամարարաց քոց.

(ՃԼԴ.)

Դարձո տէր զցասումն բարկութեան

քո յինէն, որ մեղօք բազմօք խռովք
արտմեցուցի զքեզ. Ողորմեա՛ ապըս-
տամբելոյս 'ի քէն. և զանհնարին դի-
զեալ կոյտս մեղաց՝ խոց ցրուեա՛. ընդ
քաղցր լծոյ ծառայութեան քո բևե-
ռեա՛ զմիտս իմ։

(ՃԼԹ)

Պարգևեա՛ ինձ տէր Յիսուս զլալումն
դաւթի՝ և զողբումն երեմիայի. զհա-
ռաչումն պետրոսի՝ և զյորդառատ վը-
տակս արտասուաց կնոջն պոռնկին. զի
նստեալ լացից անդադար 'ի տունջեան
և 'ի գիշերի. զի արժանի եղէց սրբիլ
'ի յաղտոյ և 'ի թարախոյ. և յորդնա-
լից վիրաց զերծանիլ. և 'ի բազմաբեղուն
չարեաց թեթևանալ՝ և դասիլ ընդ
սուրբս քո

(ՃԽ)

Ողորմիլ ինձ տէր մի յամենար. զի ա-
ռանց քո վաստակելոյ յիս՝ ոչ երբէք
գործի բարի. և ոչ սերմանեալն յանդս
հոգւոյ իմոյ բուսանի. զի սերմն բանի
քո որ յիս սերմանեցաւ՝ 'ի չար թըշ-
նամւոյն քաղեցաւ. և բուսեալն՝ ումն 'ի

տապոյ չորացաւ. և ոմն 'ի մէջ
փշոցն անկեալ հեղձեալ ցամաքեցաւ.
մշակելով քո յիս տէր՝ լծեա զերկուս
աչս եզանց որ յիս՝ արտասուագոչ ձայ-
նիւ պաղատիլ առ քեզ յարաժամ. զի
արժանի գտայց ողորմութե՟ քում.

(ՃԻԸ)

Շնորհեա տէր զխաղաղութի՟ եկեղեցւոյ
քում սրբոյ. և ամենայն հաւատացելոյ
թագաւորաց և իշխանաց՝ զօրաց և զօ-
րաւորաց 'ի ճակատու պատերազմաց՝
յաղթել անօրէն բռնաւորաց:

ՃԻԹ.

Ողորմեա տէր առաջնորդաց եկեղե-
ցւոյ՝ հայրապետաց և վարդապետաց.
երիցանց՝ սարկաւագաց՝ դպրաց՝ և
ամենայն ուխտի մանկանց եկեղեցւոյ
առնել զիրաւունս և զարդարութիւն
յա՟մ ժամ. հովուել զժողովուրդս քո.
տքնիլ վասն հոգւոց նոցա ասելով ա-
հաւասիկ ես և մանկունք իմ զոր ե-
տուր ցիս.

(ՃԼ)

Ողորմեա տէր Յիսուս Քրիստոս կա-

բօտելոց և տարակուսելոց· որբոց և այ-
րեաց· տնանկաց և տանոյ հաւատացելոց·
կենդանեաց և ննջեցելոց· և որք ընծա-
յաբերք են եկեղեցւոյ։ Աղքատաց կե-
րակրողաց՝ ողորմածաց՝ երկիւղածաց՝ և
հիւանդաց· նաւորդաց և ճանապարհոր-
դաց· խոստովանողաց և ապաշխարո-
ղաց· և անդարձ մեղաւորաց· ողոր-
մեա տէր և դարձո՛ զնոսա յապաշխա-
րութի։

(ՃԼ,Ա.)

Ողորմեա տէր եղբարց մերոց կրօնա-
ւորաց· և միանձանց ճգնաւորաց· և
որք յանձն առարին զինքեանս յաղօթս
մեր յիշել· ողորմեա բարերար և ըստ
իւրաքանչիւրոց պիտոյից։ Բաշխեա
առատապէս զշնորհս հոգւոյդ սրբոյ 'ի
վերայ ամենեցուն սոցա. և զարդարեա
և միացո 'ի սէր ծնութեան քո

(ՃԼ,Բ)

Աղաչեմ տէր Յիսուս՝ և անկանիմ ա-
ռաջի քո սուրբ խաչին· բարեխօսութ
սորա զաղաչանս իմ՝ ընկալ· և զխընդ-
րուածս իմ կատարեա· և զօրութեամբ

ուրս զօրացո՛ զիս 'ի կոչմանս յոր կո-
չեցայ. և 'ի պատուիրանս քո զոր ուսայ:
Տո՛ւր ինձ տէր զամ 'ի զօրութիւն և
'ի ժուժկալութիւն՝ 'ի զգաստութիւն
և յառողջութի՛ւն՝ լինիլ պահապան անձին
իմոյ 'ի տունջեան և 'ի գիշերի և յա-
մենայն ժամու. 'ի ննջել և 'ի յառնել.
'ի գնալ և 'ի դադարիլ. 'ի գործս և
'ի վաստակս. յաղօթել և 'ի պահել. և
զհաճոյս կամաց քոց կատարել: Ա՛մ ե-
ղիցի ինձ բերդ ամուր և աշտարակ
հզօր յերեսաց թշնամւոյն. զարդարեա՛
զիս սովաւ 'ի զարդ հոգեղինաց՝ և 'ի
լոյս անխափանալի: Եւ յաւուրն ահեղի
բարբառոյ գաբրիէլի յերեւիլ սրբոյ խա-
չին՝ լուսաւորեա՛ զխաւարեալ հոգիս.
վերանալ լուսով ընդ առաջ անմահ
փեսային. խառնիլ յերամս հայրապե-
տաց. և 'ի դասս մարտիրոսացն և 'ի
գունդս հրեշտակաց:

ԻԳ.

Բարեխօսութեամբ սրբուհւոյ Աստ-
ուածածնիդ և անարատ միշտ կուսիդ.

և Յովհաննու կարապետին. Ստեփան-
նոսի առաջին մարտիրոսին. և սրբոյն
Գրիգորի լուսաւորչին. և ամ սրբոց
վկայից քոց լուր ինձ եղկելոյս.

Դու գլորելոյս ձեռնտու լեր. և մոլորե-
լոյս առաջնորդեա և ՚ի խաւարէ հանցես
զիս ՚ի լոյս. և հոգւոյ իմոյ ազատութին շնոր-
հեա. հաստատեա ՚ի սէր քո. և բևեռեա
յերկիւղ քո. զտաճար հոգւոյ իմոյ մաք-
րեա և առ իս օթևանեսն. փակեա զդու-
ռըն մեղաց իմոց. և պարսպեա շուրջա-
նակի յոսոխէ իմմէ. Դու ՚ի մարդոյ չա-
րէ և յանիրաւէ փրկեա և ազատեա զիս
առաջինութբ. և պարգևեա ինձ զանձառ
երանութին քո. Սենդանեց մերոց ողորմեա.
և զհոգիս ննջեցելոց մերոց պայծառա-
ցեալ լուսաւորեա. (ՃԼԳ.)

Բարերարս առ քեզ ունիմք զառաքեալ-
սըն և զմարգարէսն. և զամ սուրբ
մարտիրոսսն. զհայրապետսն և զվարդա-
պետսն. Դու աղաչանաց նց և ազա-
տեա զիս ՚ի մեղաց իմոց. տնկեա յիս
հոգի շնորհաց. և յորդորեա զիս բա-
րիս գործել. ՚ի ծուլանալն իմում

բունաւորեմ. խափանեմ զիս 'ի չար գործոց և սերմանեմ յիս պտուղ բարեաց։ Քաջալերեմ զիս 'ի նեղուէ իմում. մխիթարեմ 'ի վշտի. արժանի արա զիս տէր իմ և Ած իմ Յս̃ Քս̃` լինիլ քեզ խաչակից մինչև ցմահ. որպէս զի 'ի հեշտութեանց աշխարհիս հրաժարիցիմ։ և եղէց երանելեացն դասակից. և աւազակին եղէց հաղորդ. և 'ի դրախտին վայելեցից զկեանս անմահս

(ՃԼԸ)

Յաւուրն 'ի վախճանի` հրեշտակ բարի ինձ առաքեա. և քաղցրութեամբ աւանդել զհոգի իմ. ընդ ուղղոյ Ճանապարհի առաջնորդեա. և զգազանն դարանակալ կործանեա. անցո՛ զիս անխռով ընդ օդս խաւարայինս. և զերծո՛ 'ի չար ժանեաց գազանին. ապրեցո՛ և աներկիւղ պահեա. և 'ի կայանս սրբոցն հանգո՛, սպասել և ակն ունիլ գալստեանն քո։

(ՃԼԹ)

Յորժամ գաս յերկնից ահեղ փառօք և անթիւ դասիւք հրեշտակօք, զարհու-

բեալ դողան առ հասարակ տարերք
ամ՟՝ երկնայինք և երկրայինք. յակնար-
կել քո զօրութեդ՝ սարսին յահեղ փա-
ռաց անմահ թագաւորիդ. և անձառ
դատաստանիդ. և աններելի պատուհա-
սիդ։

(ՃԼԱ.)

Յայնժամ աւուր և զիս ընկալ տէր ընդ
արդարս և ը՟ կատարեալս քո. և կար-
գաւորեա՛ ընդ աջմէ դասուն. և պսա-
կեա՛ ընդ սուրբս քո. և շնորհեա՛ ինձ
զկեանս յաւիտենից. և զանձառ բարիս
քո պարգևեա՛ ինձ. և քեզ փառք արա-
րողիդ՝ և պարգևողիդ իմոյ բարեաց։

(ՃԼԲ.)

Յիշեա՛ տէր զհոգիս ննջեցելոց մերոց
յաւուր մեծի քում գալստեանդ՝ յոր-
ժամ գաս յերկնից անձառ փառօք. ա-
հեղ և սոսկալի զօրօք. հրանիւթ և
հոգեղէն զուարթնօք։ Ո՛. հաւոր հուր
առաջի քո ընթացեալ տարածանի.
կիզէ զլերինս՝ և հալէ զբլուրս. և զա-
րարածս ամ՟ առ հասարակ տապալէ։
Յայնժամ աւուր ահեղին ողորմեա՛ ինձ

մարդասէր. զի գին սուրբ արեան քո եմ։

Յորժամ զաղբիւրս ցամաքեցուցանես՝ և զգնացս գետոց դադարեցուցանես. զծովու ջրոյն զանբաւութիւն սպառեցուցանես. զլուսաւորս խաւարեցուցանես. փողն ահագին ընդ տիեզերս ամ հնչէ. և զմեռեալսն զամ զարթուցանէ. և զաշխարհս ամ դողացուցանէ. և արարածք ամ յարուցեալ կան առաջի աստուածութե քո։ Յայնժամ դնես զդատողական աթոռ քո. և ընդ քեզ բազմեցուցանես զերկոտասան առաքեալսն։ Անաչառ դատաստանաւ դատես. յամենեցուն արդարութի պահանջես. զկամարարս քո պատուես՝ և զապստամբեալսն ի ձայնէ կոչման քո՝ պատժես. և զարդարսն փառաւորես. զմարտիրոսսն և զսուրբ վկայսն պսակես. զիմաստուն սբ կուսանսն զարդարես. և յիմար կուսանացն զառագաստին դուռն փակես. և ի փառացն և յերանութեանցն հալածես. զօդիսն քո ընտրես, և զայծիսն ի քէն ի բաց մերժես. և ի գեհեանն

տաքսեա՝ ուր լալումն է աչաց. և դառնագոյն կսկիծ ահեղ տանջանաց. և հրեղինաց չար որդանց թունաւորաց կտտողացն կրճումն ատամանց.

(ՃԼԹ)

Որդ՝ գթած և յիս յայնժամ մարդասէր տէր և բարերար փրկիչդ իմ Յիսուս Քրիստոս. և ողորմութ՟ քով գթասցիս 'ի հոգիս ննջեցելոց մերոց՝ որք հաւատով 'ի քեզ ննջեցին. զորս յարուցեալ կացուսցես առաջի ահաւոր քո մեծի դատաստանիդ՝ յայն տիեզերական հրապարակին ահեղ:

Յորժամ յայտնին գործք բարւոյ և չարի անթագչելի 'ի մէջ ատենին՝ յայնմ աւուր ահեղի թողութ՟ն շնորհեա յուսացելոց քոց. որք յանուն քո սուրբ ննջեցին յերկրի. զոր գնեցեր պատուական արեամբդ քո.

Ջնջեա զձեռագիր ամ մկրտելոցս 'ի քեզ. և թող զպարտիս յանցանաց ամ հաւատացելոց. զկամայից և զակամայից. ընդ աջմէ քումմէ դասեա. և զերանական ձայնն 'ի լսել իմ ամ հաւատացե-

լոց աւետարանեան ասելով. եկայք օրհնեալք հօր իմոյ՝ ժառանգեցէք զյաւիտենից բարութիւնսն

(ՃԽ)

Տէր՝ տէր իմ և Աստուած իմ Յս Քրիստոս՝ բարերար ողորմած և մարդասէր՝ անոխակալ և անյիշաչար՝ ընկալ զաղօթս և զխնդրուածս իմ: ով պաղատիմ և հայցեմ 'ի քէն վասն իմ և վասն ամ հաւատացելոց. մի դարձուցաներ զերեսս քո 'ի ժողովէս. այլ խոնարհեա յաղաչանս իմ: և լուր ինձ մարդասէր. և ցոյց յիս զողորմականս քո մարդասիրութեդ ողորմութի. և խնայեա 'ի մեղուցեալ ծառայս քո Նա կարգեա զիս ընդ աջմէ դասուն. և մի կացուցաներ 'ի ձախմէ ընդ այլոց՝ որք զայրացուցին զքեզ. և մի պահանջեր յինէն զանհամար պարտս յանցանաց իմոց: Նա մի դատապարտեր զմեղաւորս յայնժամ: և մի յայտնեսցես ծածուկք գործք ամբարշտութե իմոյ յանցանաց յանաչառ ատենին՝ հրեշտակային տեսանողաց և հրեշտակապետաց և ամ սրբոց քոց

սխրողաց. այլ յաղթեալ 'ի քումդ
մարդասիրութենդ արասցես այցելութիւն
մեղուցեալ ծառայիս քո. և մի ըստ չար
գործոց իմոց հատուսցես ինձ։

Եւ մի հրամայեր կապեալ ոտիւք և
ձեռօք հանել 'ի խաւարն արտաքին.
ուր լալ աչաց է և կրճտել ատամանց.
այլ ըստ քում գթութենդ և բարերա-
րութենդ և անյիշաչարութենդ՝ ողորմեա
ինձ բազմամեղիս։

Յայնժամ աւուր զերծո զիս յամօթոյն
յաւիտենից. և փրկեա զիս յանլախ-
ձան տանջանացն. ապրեցո զիս յաննե-
րելի պատուհասիցն՝ և բաց ինձ զդուռն
ողորմութեան քո. և մի փակեր զդուռն
Արքայութեան տէր իմ տէր՝ Ած իմ Ած
իմ Յիսուս Քրիստոս։

Արժանի արա զիս զանարժանս յա-
ւուրն յայնմիկ երանութեանց և անա-
պականութեան պարգևաց լուսոյ. և
անսպառ յաւիտենից ուրախութեանց.
և բարեաց հատուցմանց սրբոցն և ար-
դարոցն. և զփառս երանելեացն վայե-
լել միշտ։ Ո՜վ ի մօրից արժանապէս յա-

ռադաստ անմահ փեսային. և ժառանգեցից զանսպառ բարիսն ընդ իմ սուրբս քո՝ մաքուր և յստակ և սուրբ սրտիւ՝ համարձակ երեսօք։ Ընհատ տեսից զքեզ ընդ հրեշտակս և ընդ սուրբ սիրօղս վայելեցից զանհաս զանճառելին և զանեղծ լոյս Երրորդութեանդ՝ գոհանալով. և զուգահաւասար արասցես ընդ սուրբս քո յօրհնաբանութիւնս միշտ արժանապէս. հանապազ աստուածային անստուեր լուսով քո պայծառացմ։ Եւ անդադար երգով փառաւորեցից զամենասուրբ Երրորդութիւնդ. այժմ և յաւիտեանս յաւիտենից

ամէն։

Նորին գործեալ Աղօթք Սրբոյն Ներսէսի
Աղաչեալ առ Տէր Աստուած։

Ի

# ՏԷՐ ԱՍՏՈՒԱԾ ԶՕՐՈՒԹԵԱՆՑ՝

աղաչեմ զքո բարերարութիւնդ. ժտեմ և հայցեմ 'ի քէն. տուր ինձ տապան ապրեցուցիչ որպէս Նոյին. ապրեցուցիչ ինձ 'ի հրեղէն ծովէն և յանդնդային հրահոսանացն. յանշէջ արգելանէն և յանհնարին վտանգիցն։ Զի դու ես Տէր Աստուած՝ որ ըզ-բանդ աստուածային ծածկեցեր և 'ի ծառայական կերպս իջեր վասն իմ։ Զլեղի 'ի քիմս առեր և ապտակ 'ի ծնօտս ընկալար։ Նա այժմ աղաչեմ զքեզ՝ ազատեա զիս 'ի դառն ծառայութենէն սատանայի. զի յորժամ զձեռս իմ 'ի վեր ունելով աղօթեմ, անօրէն սատանայ խաբէ և ունայն հանէ զիս 'ի յաղօթից իմոց։ Տուր ինձ Աստուած բերդ ամուր. և կորզեա զիս յաւիւ-

ծոյն որ հանապազ կամի կլանել զիս.
Ո՛ի ընդ պիտամեան փառաւորեցից 'ի
բարձունս զՀայր և զՈրդի և զսուրբ
Հոգին. այժմ և միշտ և յաւիտեանս
յաւիտենից ամէն.

Նորին աղօթք որէոյն Ներսէսի աէս աէս
Հայրապետին,

Գ.

ՏԷՐ ՄԵՐ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍ-տոս երկնի և երկրի. իշխան կենաց և մահու. դատաւոր կենդանեաց և մեռելոց. Քրիստոս Աստուած յոյս և ապաւէն հոգւոյս իմոյ՝ քեզ խոնարհեցուցանեմ զերկրպագութիւն և մատուցանեմ զփառաբանութիւն մաղթանաց. Լուր պարգևիչ հայցուածոց իմոց՝ որ միայնդ ես առանց մեղաց. որ միայնդ ես սուրբ և 'ի սուրբս հանգուցեալ. որ միայնդ ես գթած և ողորմած.

Ողորմեա ինձ Աստուած ըստ մեծի ողորմութեան քում. և ըստ բազում

զԹուԹեան քում քաւեա՛ զանօրէնու-
Թիւնս իմ։

Ստեղծիչ ողորմեա՛ ինձ և օրհնեա՛ զիս, երևեցո՛ զերեսս քո առ իս և հաշտեա՛ ընդ իս։ Ապրեցուցիչ իմ դարձ առ իս և երևեցո՛ զերեսս քո և յիշեա՛ զիս յարքայութեան քում։

Դարձ առ իս Աստուած փրկիչ իմ. և դարձո՛ զսրտմտութիւնս քո յինէն։

Մի՛ յաւիտեան բարկանար ինձ. և մի՛ դարձուցաներ զերեսս քո յինէն։

Մի՛ բարկութեամբ քո խրատեր զիս. և մի՛ սրտմտութեամբ քով յանդիմաներ զիս։

Մի՛ յաւիտեան բարկանար ինձ և մի՛ յիշեր զչարիս իմ. և մի՛ պարտաւորեր զիս ըստ իմում անօրէնութեանս։

Մի՛ իսպառ բարկանար ինձ. և մի՛ յաւիտեան պահեր ոխս։

Մի՛ ըստ մեղաց իմոց առներ. և մի՛ ըստ անօրէնութեան իմում հատուցաներ ինձ։

Մի՛ ընկեներ զիս յերեսաց քոց. և մի՛ խնդրեր զգիր յանցանաց իմոց. և մի՛ դատապարտեր զիս. զի ես ինձէն զի-

տեմ որ անուղղայ եմ և յանցաւոր 'ի մանկութենէ. և անպատասխանի եմ յամենայնի։

Ո՛վ Լ դու դատաւոր հզօր և անոխակալ՝ որ զյանցանսն թողեր անառակ որդւոյն՝ թո՛ղ և ինձ զպարտիս մեղուցեալ և անօրինեալ քո ծառայիս։ Վասն զի քո առատ բարերարութիւնդ յայնժամ երևեսցի, յորժամ ինձ ողորմիս. որ չեմ արժանի ողորմութեան քում, յորժամ յիս ցուցանես զերկայնմտութիւն քո. որ արժանի եմ բիւրուց տանջանաց. զի զամենայն աւուրս իմ անառակութեամբ անցուցի և ոչ կացի 'ի հրամանի քում։

Ա՛րդ քաղցրացիր ինձ բարի և քաղցր թագաւոր. և հաշտեա՛ց ընդ բազմամեղիս. և մի՛ դարձուցաներ զերեսս քո յինէն. և մի՛ խոտորիր բարկութեամբ 'ի ծառայէ քումմէ։

Մ՛ի հայիր յանհնազանդութիւնս իմ և 'ի պղերգութիւնս։ Մ՛ի անարգեր զիս և մի՛ թողուր զիս. և մի՛ ընդ վայր հար-

կամեր զիս. զի թէպէտ ես շտեմար Հոգւոյդ սրբոյ ապականեցի իմով ծուլութեամբս և անառակ գնացիւքս, այլ դու գթա՛ ի յիս ստեղծիչ իմ ողորմած և անյիշաչար. և մի ապականեր զՀոգի իմ գեհենաժառանգ այրմամբ յաւիտենականաւ.

Այլ գթացեալ մարդասիրապէս՝ երկայնամիտ լեր առ իս. և ներեա՛ յանցանաց իմոց.

Եւ շնորհեա՛ ինձ ժամանակ ապաշխարութեան և զղջումն արտասուաց. և տուր իմաստութեամբ խորհիլ զօրէնս քո ՚ի տուէ և ՚ի գիշերի. գործել ըզբարի և առնել զարդարութիւն առաջի երեսաց քոց։

Համբառնամ առ քեզ տէր զաչս իմ բոլորով սրտիւ իմով. կարդամ առ քեզ Քրիստոս աստուած միածին որդի աստուծոյ՝ կերպարան անեղին և ամագոյ սուրբ Հոգւոյն։

Որ յաղթե՛լ ՚ի մարդասիրութէդ քումմէ, կամաւ խոնարհեցար յանձառ փառացըդ և առեր զծառայի կերպարանս. և

անպարտականդ՝ յաղագս դատապարտութեան մերոյ համբերեցեր մինչև զչարչարանս խաչի և մահու յանձն առեր վասն փրկութեան ստեղծուածոց քոց։

Տէր՝ որ զայսպիսի սէր ունիս առ ազգըս մարդկան՝ և կամիս զի ամ՟ մարդ կեցցէ և ՚ի գիտութիւն ճշմարտութե՟ եկեսցէ, գթա՛ և յիս ՚ի բազմամեղս գթած և մարդասէր տէր. և կամեա՛յ ընդ իմ փրկութիւնն և արա՛ ինձ ողորմութիւն եղկելւոյս և թշուառականիս. որ առաւել վիրաւորեալ եմ և ողորմելի քան զամենայն մարդիկ.

Զի ոչ և մի օր սիրեցի զքեզ ՚ի բոլոր սրտէ իմմէ. և ոչ մի ժամ յամենայն զօրութենէ իմմէ պահեցի զպատուիրանս քո. այլ պղերգութեամբ և զբօսանօք անցուցի զաւուրս իմ. և աղտեղի խորհրդովք անցուցի զամենայն կեանս իմ։

Տուրք իմ պակասեցան և անօրէնութիւնք իմ բարձրացան. և ոչ գոյ ինձ յոյս փրկութեան և տեղի ապաւինի.

բայց միայն յուսացեալ եմ 'ի քո բա-
րերարութիւնդ, և ապաւինեալ յառատ
ողորմութիւնդ։

Դու արդ՝ անկեալ ըղխմամբ արտասուաց
աղաչեմ զքեզ. պաղատիմ մինչչև եմ
կորուսեալ. և մինչչև է ժամանակ
դարձի իմոյ հասեալ. շնորհեա ինձ
ապաշխարութիւն. և յառաջ քան ըզ-
վախճան արձակեա զիս 'ի կապանաց
մեղաց իմոց. և անտես արա զանթիւ
անօրէնութիւնս իմ։

Որ ամենայն բարութեանց ես տէր. և
իշխանդ ես թողուլ զմեղս՝ ծածկեա
զամ անօրէնութիս իմ քոյով մեծութդ.
և մխիթարեա զվշտանկեալ և ըզ-
տարակուսեալ հոգի իմ։

Դու արժանաւորեա զիս յայսմհետէ ըստ
կամաց քոց քաղաքավարել զայլ ևս
պանդխտութեան իմոյ ժամանակս. և-
թէ չկամիմ; բռնադատեա զիս. և մի
թողուր 'ի կամս անձին իմոյ. մինչև
տարեալ հասուցես յօթևանս արքա-
յութեանդ երկնից։

Լուր տէր աղօթից անարժան ծա-

ռայիս քո. և պաղատանաց իմոց ունկն դիր։

Որ ասացեր թէ՝ հայցեցէք և գտջիք. բաղխեցէքև բացցի ձեզ։ Նոյն այժմ բաց ինձ տէր զդուռն ողորմութեան՝ որ ողբալովկարդամ առ քեզ. և մի ան-տես առներ զաղաչանս մեղուցելոյ ան-ձին իմոյ. որ ոչ եկիր կոչել զարդարս. այլ զմեղաւորս յապաշխարութիւն։

Արդ՝ խոնարհեալ անձամբ, բեկեալ սրտիւ, և ամօթալից երեսօք, անկանիմ առաջի քո. չեմ արժանի կոչիլ որդի քո վասն ապականեալ վարուց իմոց. և ոչ անուանել զանուն քո՝ գարշ և աղ-տեղի բերանով իմով։

Այլ համարձակիմ ՚ի գթութիւն քո. զի գիտեմ զքեզ քաղցր և անոխակալ՝ բազմախնամ և երկայնամիտ առ արա-րածս քո. և յաղագս այսորիկ ժտելով պաղատիմ առ քեզ։

Նոյն յառաջ քան զդնիլ ատենին աղա-չեմ. և նախ քան զփակիլ դրանն ա-պաշխարութեան և հատանիլ անդարձ վճռին՝ զարտասուս իմ արկանեմ ա-

ռաջի անոխակալ գթութ՟եդ քո ո֊
ղորմած տէր. երկայնամիտ, քաղցր և
անյիշաչար։

Մ՚ի ընդ քանքարաթաղուցն դատա֊
պարտեր զիս. և մի ընդ յիմար կուսան֊
սըն փակեր ինձ դուռն արքայութ՟ե քո։
Մ՚ի ընդ չար և վատ ծառային զիս
ըծակեր. և մի ընդ հերձուածողսն
դներ զբաժին իմ։

Մ՚ի ը՟ պոռնիկսն և ընդ չարագործսն
կորուսաներ զիս. և մի ընդ ախտաւորսն
և ընդ շաղաղխեալսն հոգւով հաներ
զիս ՚ի կենաց։

[illegible]զերծո՛ զիս յանզերծ տանջանացն.
և ապրեցո՛ յանհանգիստ ալէկոծուեցն։
Փրկեա՛ անմահ ՚ի մահուանէ. և ա֊
զատեա՛ ՚ի յաւիտենական ամօթոյն.
զերծո՛ ՚ի մշտ լալոյն և ՚ի հանապա֊
զորդ ողբալոյն։

Մ՚ի մերժեր զիս ՚ի քո դասուցն. և
մի տարագիր առներ յերանաւէտ կե֊
նացն։

Մ՚ի անբաժին հաներ զիս ՚ի հայրե֊
նի ժառանգութենէն. և մի զրկեր զիս

յերկնաւոր հարսանեացն:

Մ՛ի կարօտ պահեր զիս 'ի քո անճա-
ռելի տեսութենէդ. այլ շնորհեա ինձ
ընդ արժանաւորսն, և ընդ կատա-
րեալ ոգիսն, վերանալ լուսեղէն ամ-
պօք ը͞ն առաջ քո յօդս. և պարզերես
և աչալրջութեամբ կալ առաջի քո:
Եւ վասն քո փառաւորեալ հզօր և ա-
հեղ թագաւորութեանդ, մի մոռանէր
'ի դատաստան ընդ ծառայիս քո. և մի
հատուցաներ ինձ ըստ խիստ անօրէ-
նութե՟ս. և մի ամաչեցուցաներ զիս ա-
ռաջի անթիւ և ահաւոր բանակաց քոց:
Ա՛յլ ողորմեա ինձ՝ զի ոչ ոք է հա-
կառակ քեզ. և պարգևեա ինձ զար-
քայութիւնդ:

Ը՛նդ սուրբս քո դասեա և ընդ ար-
դարսն պսակեա. ընդ սիրելիս քո օրհ-
նեա և ընդ կամարարս կամաց քոց
'ի յարաժամ ուրախութեանն ու-
րախացո:

Եւ առատապարգև փառօքդ փառա-
ւորեա զիս տէր 'ի լուսեղէն երամս
արդարոց՝ ընդ նոսին հանգչիլ 'ի

վերինդ Երուսաղէմ յանստուեր և յանճառելեաց ուրախութեանդ. Օ՛ն ընդ նոսին համաձայնեալ փառաւորեցից զամենասուրբ Երրորդութիւնդ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից

Ամէն։

ԱՂՕԹՔ ՅՈՐԺԱՄ ՅՈՐՈԳԱՅԹ ԱՆԿԱՆԻ ՈՔ. ԱՄԱՉԵԱԼ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ՄԵԾԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԻՆ։

Գ.

Օրհնեալ է մարդասիրութիւնդ քո Տէր իմ և փրկիչ Յիսուս Քրիստոս. ընդէ՞ր լքանես զիս. դու միայն ես աւանդ մեղաց. և անուն քո զանոխակալութիւն և զմարդասիրութիւն ցուցանէ. գթա՛ յիս՝ վասն զի դու ես միայն մարդասէր։

Ապրեցո՛ զիս զանկեալս ’ի մեղս. զի
դու միայն ես աւանց մեղաց։

Հա՛ն զիս ’ի տղմոյ անօրէնութե՛ իմոյ զի
ընկղմեցայ յաւիտեանս յաւիտենից։

Փրկեա՛ զիս ’ի թշնամեաց իմոց. քան-
զի աչա՛ իբրև զառիւծ գոչէ և մռնչէ
կամելով կլանել զիս։

Արդ տէր իմ փայլատակեա՛ զփայլա-
տակմունս քո. և կործանեա՛ զզօրութի
նոցա. երկիցեն և խաւարեսցին յերե-
սաց քոց. քանզի անկարէ և ո՛չ ունի
զօրութի կալ առաջի քո տէր. և առաջի
սիրողաց քոց։

Տեսանէ զզօրութիւն նշանի խաչի քո
տէր և զարհուրի. և ամաչելով ’ի բաց
հեռանայ յայնցանէ որ կարդան առ
քեզ։

Այժմ տէր կեցո՛ և ապրեցո՛ զիս. վ՟
զի ’ի քեզ ապաւինեցայ. հա՛ն ’ի նե-
ղութենէ զանձն իմ. զի մի՛ իսպառ կո-
րուսցէ զիս նենգաւորն որ մարտնչի
ընդ իս ծածուկ հնարիւք։

Որ խորհրդոց ես տէր՝ և քննես ըզ-
սիրտս և զերիկամունս՝ սրբեա՛ զսիրտ

իմ և զխորհուրդս 'ի զազիր և 'ի պիղծ խորհրդոց. զի մի՛ իսպառ կորեայց 'ի յաւիտենական կորուստն։

Որ կարօղդ ես ամենայնի, ողորմեա՛ ինձ աստուած իմ։ տո՛ւր շնորհ արտասուաց մեղուցեալ հոգւոյս. որպէս զի լուացից զբազմութիւն մեղացս. զի ապրեցայց 'ի ձեռաց անողորմ հրեշտակաց որ արկանեն զամբարիշտսն 'ի հուր գեհենին։

Նորանի թէ լայի հանապազ աղաչելով զքեզ աստուածդ՝ զի մի՛ անարժան գըտայց 'ի ժամուն յորժամ գայցես. և մի՛ լուայց գահաւոր զձայնն զայն, թէ երթ 'ի բաց մշակդ անիրաւութեան ոչ գիտեմ ուստի ես։

Աստուած բարձրեալ միայն առանց մեղաց. շնորհեա՛ ինձ մեղաւորիս յաւուր յայնմիկ զբազում գթութիւն քո. զի մի՛ յայտնեսցին ծածուկ ամբարշտութիւնք իմ առաջի տեսողաց հրեշտակաց և հրեշտակապետաց՝ մարգարէից առաքելոց և արդարոց սրբոց։

Այլ ապրեցո՛ զիս զամբարիշտս շնոր-

հօք ողորմութեան քո։
Ընկալ զիս 'ի դրախտն փափկութե՛ն
ընդ կատարեալ արդարսն։
Ընկալ զաղօթս մեղուցեալ ծառայիս
քո բարեխօսութեամբ սրբոցն որք հա-
ճոյ եղեն քեզ Յս՟ Քս՟ Տէրդ մեր։
Եւ քեզ ընդ Հօր և սուրբ Հոգւոյդ
փառք յաւիտեանս յաւիտենից Ամէն։

‡‡‡‡‡‡‡‡‡‡‡‡‡‡‡‡‡‡‡‡‡‡‡‡

## 'ՆՈՐԻՆ ԱՂՕԹՔ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ՎԵՐԱՅ ԼՈՒՍԱՒՈՐՉԻՆ։

Ա

Աղաչեմ զքեզ փրկիչ աշխարհի Յս՟. հայեաց յիս և ողորմեա ինձ. փրկեա զիս 'ի բազմութենէ անօրէնութեան իմոյ. քանզի անարգեցի զամենայն բարիսն զոր արարեր յիս 'ի մանկութե՛ իմմէ։ Զիս զտխմարս՝ զտգէտս և զանիմաստս՝ արարեր անօթ լի գիտութե՛. յաճախեաց յիս շնորհն քո՝ և լցոյց զքաղց իմ և զծարաւ իմ. զովացոյց

և լուսաւորեաց զխաւարեալ միտս իմ.
և ժողովեաց 'ի մոլորութենէ զխոր-
հուրդս իմ, և եկից 'ի ծոց իմ.

Այժմ երկրպագանեմ և աղաչեմ,ան-
կանիմ և հայցեմ խոստովանելով ըզ-
քումդ բարերարութենէդ. կատա-
րեա́ յիս զխոստումն շնորհի քո և պա-
հեա́ զնա 'ի գանձի քում. զի դարձեալ
տացես ինձ յաւուրն յայն մեծի.

Մի՛ բարկանար ինձ մարդասէր. զի
ոչ հանդուրժեմ սպառնալեաց քոց.
յաղագս այսորիկ աղաչեմ ժտելով՝ զի
առաւել քան ըզչափն յանձնախեաց յիս.
վասն զի լեզու իմ անկարացաւ ոչ կա-
րելով խօսել զշնորհէ քումմէ. Հիա-
ցան և միտք իմ ոչ բերելով զբազմու-
թիւն ալեաց նորա.

Սրբարան և ճառագայթ օրհնելոյ
Հօրդ՝ դադարեցո́ առիս 'ի հոսմանց
նորա. զի իբրև զհուր բորբոքեալ բո-
ցակիզէ զերիկամունս իմ և զսիրտ իմ.
Անդէր դարձեալ պարգևեա́ ինձ զնա
և կեցո́ զիս յարքայութեան քում. մի
յիշեր զանօրէնութիւնս իմ. յանդգնիմ՝

հայցեմ տուր ինձ զխնդրուածս իմ. և արա օթևանս օրհնել Հօր քո յաւուր յայտնութեան.

Շնորհեա ինձ Քրիստոս զհայցուածս իմ. զի դու միայն ես տուօղ կենաց իմոց. Եւ քեզ փառք յաւիտեանս յաւիտենից Ամէն.

Սրբոյն Ն[illegible] Եւ սրբոյն [illegible] Եփրեմի Ասորւոյ Խոստովանութիւն։ 34

Եւ արդ՝ հրաժարելով ՚ի սատանայէ և յամենայն խաբէութենէ նորա, ՚ի պատրանաց նորա ՚ի գնացից նորա. և ՚ի պաշտօնէից նորա և ՚ի հրերեշտակաց նորա. եկեալ առաջի սբ̃ եկեղեցւոյ՝ խոստովանիմ և հաւատամ զՀայր անսկիզբն՝ զՈրդին միածին ծնունդ ՚ի Հօրէ. և զսուրբ Հոգին բղխումն ՚ի Հօրէ. երեք անձամբ և մի բնութեամբ և մի աստուածութեամբ, անշփոթ միաւորութեամբ.

Եւ զանճառ տնօրէնութիւն մարդա-
ցելոյ Բանին աստուծոյ։

Եւ արդ՝ ես գերիս և արտասուելիս և
որքան բան զօրէ դարովելիս՝ մեղայ ա-
մենասուրբ Երրորդութեան Հօր և Որդւոյ
և Հոգւոյն սրբոյ Մեղայ և սրբուհւոյ
Աստուածածնին և սրբոց հրեշտակաց
և ամենայն ընտրելոց սրբոց դասուց։
Մեղայ և սուրբ մարմնոյն Քրիստոսի
և պաշտելի արեանն. յիմանալիսն և
՚ի զգալիսս, անդէպ մտածութեամբ
աներևոյթ սխալանօք. անճառ խաւա-
րային այլանդակ խորհրդով։ Մեղայ
մեղայ և հոգւովս և մարմնովս և մտօքս՝
և բանիւ՝ և գործով՝ և գիտութեամբ
և անգիտութեամբ կամաւ և ակամայ
Եւ ամենայն մարմնովս, յկե զօդուա-
ծովքս, երկոտասան անդամօքս, ե զգա-
յութեամբքս. Աչօքս յարատ հայելով,
և զամենայն գեղեցկութիւն. նկարացն
զննելով, և զվատթարսն տեսանելով։
Ականջօքս՝ չարին ունկն դնելով. և
ամենայնի քաղցրաձայնութեան.
Հոտոտելեօքս՝ զմեղաց հոտն առնլով և

զամենայն անուշահոտութիւնս։
Իներանովս՝ զհամադամ քաղցրութիւն ճաշակելով, և զխառնակ և զանսուրբս անզգաութեամբ։ Ձեռօքս բազում մեղս շօշափելով։ Ոտիւքս յանպատշաճ տեղիս գնալով։

Մեղայ Աստուծոյ մեղայ և վեց շարժմամբս 'ի վեր՝ հպարտութեամբ, 'ի վայր՝ տրտմութեամբ։ Յառաջ՝ յանդգնութեամբ, յետուստ՝ սրտմտութ̃բ։ Յաջ՝ հոգեկան մեղօք, ձախ՝ մարմնական մեղօք։

Մեղայ և տասն պատգամացն Աստուծոյ՝ յանձնառականին և հրաժարականին. զյանձնառականն չեմ կատարեալ, և զհրաժարականն եմ արարեալ։ Մեղուցեալ եմ Աստուծոյ և հոգևորական կրիւքս, հասարակ զգայութեամբս և մտօքս. և ամենայն շփոթմանց հետևելով, և ամբոխելով զխս 'ի յանձահաճոյ հանդարտութենէն հեռացեալ եմ։ Եւ այսպէս խաւարամած լինելով եօթն մահու չափ մեղօք մոլորեալ եմ։
Հպարտութեամբ, ամբարտաւանութ̃բ,

անբարհաւաճութ̃, գոռոզութ̃, սնափառութեամբ, փառասիրութեամբ, պատուասիրութեամբ, զգեստասիրութ̃, պճնելով, անձնահաճելով, կեղծաւորելով, սուտ առաքինի ձեւանալով, զաղօթս 'ի ցոյցս մարդկան առնելով. անարժանութ̃ յեկեղեցի մտանելով. 'ի խաչ և 'ի բուրվառ և յաւետարան մերձենալով, և կարդալով.

Մեղայ Աստուծոյ և թիւր խոստովանելով, և զմեղս պատճառելով, խեթիւ և ատելութեամբ և անմաքուր վարուք և անսուրբ հոգւով զՔրիստոս պատարագելով. զԱ̃ծ Հայր հայհոյելով, զՈրդին աստուծոյ արհամարհելով, և զսուրբ Հոգին թշնամանելով, և զանբարկանալին Աստուած 'ի 'ի բարկութիւն շարժելով 'ի վերայ աշխարհի և մարդկան։ Ո՛հ որ յերեւելիս աստուածապաշտ և աղօթօղ և պահեցօղ, և 'ի ծածուկ թերահաւատ և ծոյլ և յամենայն բարեաց ունայն։ Յերևելիս կուսան, և 'ի ծածուկ վավաշոտ։ Յերևելիս ժիր, և 'ի ծածուկ

Թոյլ։ Յերեւելիս սուրբ, եւ 'ի ծածուկ պիղծ։ Յերեւելիս պարկեշտ՝ եւ 'ի ծածուկ ագահ։ Յերեւելիս ողորմած, եւ 'ի ծածուկ անողորմ։

Յերեւելիս աղքատասէր, եւ 'ի ծածուկ աղքատատեաց։

Յերեւելիս առաքինի, եւ 'ի ծածուկ պղերգ։

Յերեւելիս գովելի, եւ 'ի ծածուկ պարսաւելի։

Ա՞րդ զորս ասացից եւ կամ զո՞րս թուեցից· երբ ոչ եզր կայ եւ ոչ թիւ։

Մեղուցեալ եմ կարգիս զանձնս ընդ արդարս համարելով. եւ զայլս քամահելով։

Զտօնս սրբոց ոչ մեծարելով. եւ հայհոյութեամբ մեղուցեալ եմ Աստուծոյ· զանուն միայն ունիմ քահանայի եւ ոչ զգործն, զօրինակն ունիմ եւ ոչ ըզճշմարտութիւնն. քանզի ամենայն անպատրաստութեամբ եւ անկարգութեամբ կալով զմահուն օրն եւ զանաչառ դատաստանն Աստուծոյ եւ զդժոխոց ահն եւ զարքայութեան սէրն մոռացայ· կա-

մապաշտելով, հակառակելով, անհնազանդ լինելով. ՚ի հեզութենէ և ՚ի խոնարհութենէ փախչելով. զծերսն չպատուելով. զծնօղսն չխրելով. ստահակութեամբ շրջելով, մեղուցեալ եմ Մ՝եղայ Ա՝ստուծոյ և բարկացողութ̃բ, ցասմամբ, սրտմտութեամբ, գազանաբար յարձակելով, և զեղբարս խածանելով. կագ և կռիւ առնելով, և յիշոցս տալով, ՚ի չար կարծիս դատելով. խռով կալով, ուստ հաշտութիւն առնելով. և զհոգիս իմ կորուսանելով, և բարս գազանի ունելով, և զանբան անասնոց անխնայ հարկանելով. ՚ի մարդկան սիրոյն որոշելով, պառակտումն առնելով, բանսարկելով, խարդախելով, խորամանկելով, երկմտելով, թերահաւատելով. բազում տրտունջ և նզովք հանելով. զուր և անիրաւ զրպարտելով. քրթմնջելով. շոգմոգելով.

Մ՝եղայ մեղայ մեղայ, և նախանձ ունելով, մախալով, դժմադարձելով, ախակալութեամբ, ատելութեամբ, քի-

նախանձութեամբ, չարութեամբ, նեն-
գելով, քամահելով, զշարելով, սուտ
վկայելով, բամբասելով, արհամարհե-
լով, և զառաջնորդս եկեղեցւոյ և ըզ-
վարդապետս, զծերս՝ և զտղայս, և զայ-
լոց իրաւն սուտ առնելով, և զիմ սուտն
իրաւ. զայլոց փոքր մեղքն մեծ համա-
րելով, և զիմ բազումն ծածկելով,
զայլոց շիւղն գերան կարծելով, և զիմ
գերանն շիւղ. զայլոց բարին չար ա-
նելով, և զիմ չարն բարի. զայլոց լոյսն
խաւար տեսանելով, և զիմ խաւարն լոյս.
զայլոց առաքինութիւնն մարդահա-
ճութիւն դատելով, և զիմ մարդահա-
ճութիւնս առաքինութիւն, և յանդու-
գըն լինելով, ՚ի մէջ բանից անկանե-
լով, լրբելով, ՚ի խրատուց երես դար-
ձուցանելով՝ և առաջի ծերոց լռութ̃
ոչ կալով. և հրամանաց և բանից նո-
ցա՝ ոչ լսելով.

Ուխտ դնելով և ոչ կատարելով. և
անյուսութեամբ ՚ի խորս տրտմութե̃
անկանելով. զպատուիրանս Աստուծոյ
արհամարհելով. սուրբ գրոց ունկն

չդնելով․ ՚ի սուրբ հրեշտակէն խմէ; չակնածելով․ և ՚ի բարեաց թափուր լինելով․ ընդ չարսն խնդալով․ զբարեկամսն ատելով․ զթշնամիսն չսիրելով․ զատելիսն աստուծոյ չատելով։

Ա՞ թէ զորքանութիւնն որպէս կարացից յայտ բերել՝ որ բազում են քան զաւազ ծովու․ քանզի մեղուցեալ եմ Աստուծոյ և ագահութեամբ․ արծաթսիրութեամբ․ խաբելով․ աւելի առնլով և պակաս տալով․ վաճառասիրելով․ կծծելով․ գաղտ գողանալով․ յայտնի յափշտակելով, և զրկելով։

Աւելի ստանալով, աղքատին չողորմելով, առ օտարսն չգթալով․ զեղբարս չսիրելով, զկարօտելսն չդարմանելով, զհիւանդն չտեսանելով, տկարին չըսպասաւորելով, զաղքատս արհամարհելով, զհարուստն գովելով, յաջողելոյն ծառայելով, ունեւորացն սուտ հաճութիւն առնելով, աչառելով, և մարդահաճոյ լինելով։ Սուտ երդուելով, և զԱստուած ՚ի բարկութիւն շարլով։

Մեղայ մեղայ և քան զհող երկրի ծանրագոյն մեղօք քանզի մեղայ Աստուծոյ և Երկրամոլութեամբ. ՚ի կերակուրս և յըմպելիս՝ ցանկանալով. աւելի առնլով՝ և անյագ ուտելով, զորովայնս խձողելով. առանց ժամի և ժամ արձակի ճաշակելով. զպահսն արհամարհելով, առանց մեծի հիւանդութե զգինին սիրելով. զմարմնոյս դարմանն հոգալով. զորովայնս պաշտելով, և խաչին Քրիստոսի թշնամի անուանելով, և Լուսաւորչին կանոնաց սևերես լինելով:

Մեղուցեալ եմ իմ սուրբ կարգիս, ծուլութեամբ, և հեղգութեամբ, անժուժկալ լինելով. տխրանալով. զուսումն ատելով. դադարկ կենալով. ըզսուրբ գիրս ոչ կարդալով. քնով դանդաղելով, և ՚ի ժամատեղն ծանրանալով, արթուն ոչ կալով, և պատմութե սրբոց միտ ոչ դնելով. բազմախօսութի առնելով. սաղմոսի ականջ ոչ դնելով և կամ ձեռագործով յապաղելով. յօրանջելով. ձգտելով. ձանձրանալով. և

Յաստուծոյ ոչ երկնչելով. ՚ի հրապարակ նստելով՝ շատախօս լինելով, Թատերս և ՚ի ծաղրս լկտեաց հեշտանալով և ծաղր առնելով։

Մ՝եղայ Աստուծոյ մեղմ և պոռնկական խորհրդով. գինովութեամբ, աղտեղութեամբ, բղջախոհութեամբ, վավաշոտ ցանկութեամբ. զանազան և զազիր խորհրդով ՚ի գիշերի և ՚ի տունջեան պէս պէս կերպարանօք քնով և արթնութեամբ. և արատ հայելով. կատակերգելով, անամօթ լինելով. լրբելով, ցոփ խօսելով, և տոփական մարմնաշարժութեամբ զմիտս աղտեղելով, առ իգականս և առ արուականս. առ անասնականս ապականեալ խորհրդով մեղանչելով, և առ ամենայն մոլորական պատրանս և երազական փորձութեանց. քնոյ և արթնութեան, որ ՚ի ժամու և տարաժամու անկեալ է ՚ի վերայ տառապեալ հոգւոյս, զոր չարին յօժարութեամբ մեղուցեալ եմ Աստուծոյ։

Եւ արդ՝ ահա՛ յայտնեալ հրապարա-

կեցի զորպիսութիւն մեղաց իմոց առաջի Տեառն և ապաշաւեալ զղջացեալ յամենայնէ, և եկեալ 'ի խնդիր թողութեան սխալանաց իմոց։ Եւ դու հայր մեր և սուրբ տէր հայցեմ ըզգթութիւնն Աստուծոյ. և շնորհեա քաւութիւն ինձ յԱստուծոյ, հրամանաւն՝ զոր ունիս 'ի Քրիստոսէ Աստուծոյ։ Որում փառք և գոհութիւն և պատիւ և միշտ և յաւիտեանս յաւիտենից.

Ամէն։

Աղօթք արձակման. Արարեալ նմին Լուսաւորչին Գրիգորի։ 34

Ողորմեսցի քեզ մարդասէրն Աստուած, և թողութիւն շնորհեսցէ ամ յանցանաց քոյ խոստովանացելոցն և մոռացելոցն. և ես կարգաւ քահանայական իշխանութե և հրամանաւն Աստուածային, թէ զոր արձակեսջիք յերկրի՝ եղիցի արձակեալ յերկինս. Նովին բանիւն արձակեմ զքեզ յամենայն մասնակցութէ մեղաց քոյ 'ի խորհրդոց 'ի բանից և 'ի

գործոց՝ յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ։ Եւ դարձեալ տամ շքեղ ՚ի խորհուրդս սուրբ եկեղեցւոյ. զի զոր ինչ գործեսցես բարիս՝ եղիցի քեզ ՚ի բարեգործութիւն և ՚ի փառս հանդերձեալ կենացն. Ամէն։

## Աղօթք դարձելոյն ՚ի շնորհաց աղաչխաբութեան։

Օ.

Ա՛նսկիզբն Աստուած և անհասանելի՝ բաց զաչս սրտի իմոյ բանիւ գիտութեան քո՝ բաւական լինիլ գոհանալ զանուանէ քումմէ. գովել և փառաւորել զքեզ և արժանապէս գնալ ՚ի ճանապարհս քո։

Դատաւոր արդար՝ երկայնամտեա՛ առ իս բազմամերդս քոյով մարդասիրութ.դ. զի եղկելի եմ մեղօք՝ դեղխեալ անօրէնութ. և զաչիր գթութեամբ զըմարմինս իմ ապականեցի։

Որ էիր յառաջ էականութեամբ Աստու-ուած ընդ Հօր՝ ի մեզ հաճեցար բը-նակիլ ընդ հողեղինացս. և ընդ մար-դկան շրջեցար ընդ մեղաւորացս. Թո՛ղ տէր զմեղս իմ և թեթևացո՛ ըզծան-րաբեռնեալս. ժտելով հայցեմ ՚ի քէն, զի ժամանակ է ապաշխարութեան։

՚Ի քէն հայցեմ բազումողորմ տէ՛ր աղ-բիւր կենաց՝ լուսաւորեա՛ զաչս սրտի իմոյ լուսով գիտութեան քո։

Յոյս աշխարհի Ք[րիստո]ս. ծագումն ան-ճառելւոյ լուսոյ. կեանք՝ որոց սիրեն զքեզ. կերակուր անապականելի. կեն-դանութիւն յաւիտենից։

Հրով հոգւոյդ սրբոյ՝ հալեա՛ զպաղումն ձմեռնացեալ սրտի իմոյ. որ ձուլեալ է եղկելի գործովք անօրէնութեան։

Ուղղեա՛ քո Աստուածային զօրութեամբդ զանուղղոյ խորհուրդս իմ չար ուղե-կանին աստի կենացս։ Ճրագ ճշ-մարտութեան և ճառագայթատու՝ մեր-կեա՛ յինէն զխաւար մթացեալ մեղացս։

Զեղկելիս մեղօք յիշեա՛ քո Աստուա-ծութեամբդ յահագին աւուրն յայնմիկ ահեղ մեծի դատաստանին։

Ալէկոծելոց նաւահանգիստ՝ և լիու՟ն ունայնացելոցս յարդարութենէ և ունողիս զանօրէնու՟ն չար գործովք.
՚Ի չարիս չարչարեալ է անձն իմ. զի՞նչ արարից մեղուցեալ անձամբս. պէս պէս ախտիւք պղծեցայ յանառակու՟ե, զրկեցայ ՚ի հայրենական լուսոյն. քնքեցի զձեռագիր որդէգրու՟ե կենաց. ջեռուցի զհուր յաւիտենականն.

Սուրբ սրտիւ կարդամ առ քեզ՝ ամենասուրբդ Աստուած. վտանգելոյս օգնական. վիրաւորելոյս բժիշկ. տեղի տարակուսելոյս. կորուսելոյս խնդրօղ. մոլորելոյս և գերելոյս դարձուցիչ. ապաւէն ամենեցուն որք կարդան առ քեզ. Տէր տառապելոյս և տարակուսելոյս գերելոյս ՚ի սատանայէ զմեծ քո զողորմութիւն.

Ահա հասեալ եմ ՚ի դուռն մահու չարաչար գործովք իմովք. զաչս իմ ՚ի վեր համբառնամ առ բարձրեալ Տէրդ և բարերար. հայցեմ ՚ի քէն բաց ըզ-դուռն ողորմու՟ե մեղուցեալ հոգւոյ իմոյ. որպէս բացեր աւազակին զդուռն

դրախտին քո. և մի ամօթալից դար-
ձուցաներ զիս 'ի քո առատ ողորմութենէ.
զի գիտեմ սուրբ արեան քո. յիշեա
զիս և ողորմեա ինձ Աստուած:

Որ անեղ և անսկիզբն ես՝ անստեղծ և
արարիչ ամենայն արարածոց. որ ոչ
աշխարհս տանել զքեզ կարէ, և ոչ
երկինք բովանդակել կարեն. 'ի վեր
ես քան զերկինս և անբաւ քան զծագս.
երևելիք և աներևոյթք բովանդակեալ
են առաջի քո:

Դու տիրես ամենեցուն և հրամանաւ
քո կառավարին ամենայն արարածք:
Դու աղքատացուցանես և դու մեծա-
ցուցանես. դու սպանանես, հարկանես
և բժշկես: Դու ես Աստուած իմ և փրկիչ
վտանգելոյս 'ի սատանայէ. առողջա-
ցուցիչ հիւանդիս մեղօք. ընդունող ա-
ղօթից և կատարիչ խնդրուածոց: Նա-
յեա Տէր 'ի պաղատանս իմ և ընկալ
զիս մարդասիրութեամբ քո:

Մի բարկութեամբ քո խրատեր զիս. և մի
սրտմտութեամբ քո յանդիմաներ զիս. զի դու
ես Տէր և Արարիչ: Հայր և Ստեղ-

ծիչ. և ես առ Քեզ երթիցեմ զի օգ-
նութիւն իմ 'ի քէն է։

Հայեաց 'ի պաղատանս իմ. և ընկալ զիս մարդասիրութ՟ քո. զի քեզ մեղայ և ըզ-քեզ աղաչեմ և զքեզ խոստովանիմ։

Մեղայ յերկինս և առաջի քո. մի ընդ-դատեալսն տանջեր զիս. և մի՛ ը՟ դա-տապարտեալսն պատուհասեր։

Այլ ընդ կամարարս կամաց քոց ըն-կալցիս. և ընդ պահօղս պատուիրանաց քոց պահեա զիս. զի թէ առանց ներելոյ զբազում յանցանս իմ քննես՝ ապա ըն-դունայն է ինձ խոստումն յարութե. և հուր գեհենին է ինձ ժառանգութի. և թէ զդատարկաբանութիւն իմ և զանդէպ զայլանօրէնութիւն իմ խնդրեսցես յինէն, ապա երանեմ չեղելոցն յորովայնէ։

Հայեա Տէր 'ի պաղատանս իմ և ըն-կալ զիս մարդասիրութեամբդ քո։

Ողորմեա ինձ որպէս քանանացւոյն, որպ՟ պոռնկին, որպէս մաքսաւորին. և գթա յիս որպէս յանառակ որդին. և որպէս աւազակին շնորհեա բազում յանցանաց իմոց զթողութիւն։

Ընկա՛լ զիս որպէս զհայհոյիչսն և զ-
հալածիչսն· փարատեցո՛ զխաւարչմնգաց
յաչաց իմոց։

Բա՛ց զաչս իմ զլցեալս երկրային ցան-
կութ երկնային լուսովդ· և բժշկեա՛ զ-
վիրաւորեալ լեզուս իմ ՚ի բամբասանաց։

Սրբեա՛ զսիրտ իմ ՚ի չար և ՚ի պիղծ
խորհրդոց· վասն զի քեզ ցանկամ անդ-
իմոյ բարերարի և բազմագթութի իմոյ
Արարչիդ։ Մի՛ յաւիտենական ամօ-
թոյն ամաչեցուցաներ զիս· և մի՛ ահեղ
դատաստանաւն դողացուցաներ։

Մի՛ տիեզերական հրապարակաւն զիս
յանդիմաներ· և մի՛ աններելի տան-
ջանացն մատներ։

Մի՛ սոսկալի հրոյն պատուհասեր· այլ
փրկեա՛ զիս ՚ի հրացեալ հնոցէն, ՚ի
հրահոսեալ գետոյն և յորդանցն չա-
րաթունից, ՚ի հանապազորդ նեղութէն
և ՚ի կրճտել ատամանցն։

Եւ բնակեցո՛ զիս ընդ կամարարս կա-
մաց քոյ՝ յանանցական կեանսն։

Զի ընդ նոսին արժանի եղէց գոհանալով
փառաւորել զՀայր և զՈրդի և զՍուրբ
Հոգիդ· Ամէն։

Օ օրտաւր Աղօթք սրբոյն Գրիգորի Նա-
րեկացւոյ հրեշտականման Վարդապետի։
Վասն Արեանն Տեառն փրկագին ամենայն
հեծութեանս. Եւ հայցէն ողորմութեանցն։

Գլուխ Գ. Ն.

ԸՆԴՈՒԱԿ՛Ն ԱՐԴԱՐ

Ճառագայթ օրհնեալ։ Լու-
սոյ կերպարան։ Փափագ անճ-
կութեան։ Բարձրեալ անքն-
նին։ Օ օրեղ անպատում։ Բարւոյ բերկ-
րութիւն, Յուսոյ տեսութիւն։ Գո-
վել երկնաւորք։ Թագաւոր փառաց։
Քրիստոս արարիչ։ Խոստովանեալ
կեանք։

Եւ արդ զթերութիւն վրիպմանց բազ-
մասխալ ձայնի եղկելոյս՝ ամենազօրդ
բանիւ լցեալ՝ մատուցես յաղերս հա-
ճութեան հօր քում բարձրելոյ։ Որ
վասն իմ ՚ի փորձ եկիր անխծից, կեր-
պարանեալ զիմ նմանութիւն, կենաց օրհ-
նութիւն Վերնոց և ներքնոց բարեխնա-

մօղ տեսուչ համայնից։ Ո՛վ ի թէ յանձն տուեր մեռանիլ վասն իմ Աստուածդ և տէր բոլորեցուն, որչափ հաճեցիս տուաւել և այժմ վտանգաւորս կրից կարեկցել։ Ը՛ իմ պարտաւորիս միշտ աղօթելով ազգականցս մարմնոյդ՝ առելոյ 'ի մէնջ՝ առ համապատիւդ քո Հայր։ Նաև վասն արեանդ պատուականի միշտ մատուցելոյ 'ի հաճուն կամաց առաքչիդ, բարձցին վտանգք մեղուցեալ դատապարտելոյս։ Թողցին պարտիքն։ Սրբեսցի աղօթն։ Մոռասցին պատկառանքն։ Խորեգործեսցին դատակնիքքն։ Սատակեսցին որդունքն։ Մերասցի լալն։ Հանդարտեսցի կըրձունն ատամանցն։ Սպառեսցին ողբքն։ Հատցին արտասուքն։ Մերժեսցի սուգըն։ Հալածեսցի խաւարն։ Վանեսցի հուրն սաստկութեան։ Հերքեսցին տանջանարանքն բազմօրինակք։

Նկեսցեն գթութիւք կամաւորդ կենաց ամենից։ Ողադեսցէ լոյսդ։ Բարգաւացէ փրկութիւնդ։ Հասցէ օգնութիւնդ։ Քամանեսցէ այցելութիւնդ։ Կանխեսցէ ցօղդ

ողորմութեան։ Յառաջեսցէ արբուսցէ
զանդաստանս պարքեալ անկեալ ոսկե-
րացս՝ թշուառութիւ ՚ի վիհն մահու։
Ծաղկեսցէ պտղաբերեսցէ բաժակդ
երկնաւոր արեան կենարարիդ՝ զեր-
կիրս խնամեալ յաւուրն լուսոյ։
Որ անծախապէս միշտ պատարագիլ՝ յի-
շատակ կենաց փրկութե հոգւոց ննջե-
ցելոց։ զի ամենայնիւ մահացեալ հոգիս
մարմնովս մեղաց՝ շնորհօք քո գթած
՚ի քեզ զօրացեալ՝ քեւ նորոգեցայց՝ զա-
տեալ ՚ի մեղաց անմահ կենդանութբ
՚ի յարութեան արդարոց՝ Հօր քում
օրհնեցելոյ։ Ընդ որում քեզ փառք՝
և Հոգւոյդ սրբոյ բարերարութիւն
վայելչական գոհութեամբ՝ այժմ և
միշտ և յաւիտեանս յաւիտենից.
Ամէն։

## Գլուխ. ՂԳ.

Աստուած յաւիտենական, բարերար և ամենակալ. Ստեղծիչ լուսոյ և յօրինիչ գիշերոյ։ Կեանք ՚ի մահու և լոյս ՚ի խաւարի։ Յոյս ակնունողաց, և երկայնմտութիւն տարակուսելոց։ Որ ամենարուեստ իմաստութեամբ քով՝ դարձուցանես յայգ զստուերս մահու։ Անուաղ ծագումն և անմուտ արեգակն։ Քանզի ոչ զօրէ ծածկել զփառս տէրութեան քո խաւար գիշերոյ։ Որում կրկնի ծունր երկրպագութեան ամենայն եղելոց. երկնաւորաց և երկրաւորաց և սանդարամետականաց։ Որ լսես զձեծուն կապելոց, և հայիս յաղօթս խոնարհաց, և ընդունիս զխնդրուածս նց։ Աստուած իմ և Թագաւոր իմ. կեանք իմ և ապաւէն իմ. յոյս իմ և վստահութիւն իմ Յիսուս Քրիստոս Աստուածդ մեր։ Սուրբդ՝ հանգուցեալ ՚ի հոգիս սրբոց։ Մխիթարութիւն վշտաց, և քաւարան մեղուցելոց։ Որ գիտես զամենայն յա-

ռաջ քան զլինիլն նոցա. առաքեա ըզ-
պահպանողական զօրութիւն աջոյ քո. և
փրկեա զիս յերկիւղէ գիշերի և ՚ի դի-
ւէ չարէ: Որպէս զի զյիշատակ սոս-
կալի և սուրբ քո անուանդ՝ միշտ համ-
բուրել շրթամբք հոգւոյ ըղձմամբ շնչոյ,
կեցից պահպանեալ ընդ ամենեսին որ կար-
դան զքեզ ՚ի բոլոր սրտէ: Եւ ՚ի դրոշ-
մէ խաչի քոյ նշանիւդ՝ զոր աստուա-
ծային արեամբդ քո ներկեալ նորոգե-
ցեր և ՚ի նոյն շնորհ որդեգրութեան զմեզ
մկրտեցեր, և ՚ի փառս պատկերի քո
նկարեալ յօրինեցեր: Այսու պարգևօք
Աստուածականօք, ամաչեսցէ սատանայ. քակ-
տեսցին մեքենայքն. բարձցին որո-
գայթքն. պարտեսցին մարտուցեալքն.
պակասեսցին զէնքն սայրասուրք. մեր-
ժեսցի մէգն. փարատեսցի խաւարն.
մեկնեսցի մառախուղն. Բազուկ քո հո-
վանասցի, և աջ քո կնքեսցէ: Տէր զի
գթած ես և ողորմած. և անուն քո
կոչեցեալ է ՚ի վերայ ծառայից քոց. Եւ քեզ
ընդ Հօր՝ Հոգւովդ սրբով փառք և իշխա-
նութիւն յաւիտեանս յաւիտենից. Ամէն.

Աղերսանք առ Սուրբ Աստուածածինն
և առ ամենայն Սուրբսն Աստուծոյ

Աստուածածին ամենօրհ նեալ.
ըզ պաղատանս մեր ըն կալ.
'ի հանդստեան ժամուս հա սեալ.
առ քեզ գոչեմք անձամբ թախ ծեալ.
Բանին կենաց բարձող ե դեր.
զԱստուած մարմնով պարագրե ցեր.
առ բանն Աստուած բարեխօս լեր.
'ի փորձանաց ըզմեզ փըր կեր.
Գովեալ ես դու փայտ փըրկու թեն.
ամէնօրհնեալ յաղթօղ նը շան.
'ի գլխերիս ըստուերա կան.
ծագեա մեզ զըլոյսդ արփիա կան.
Դողան 'ի քէն գունդք խաւա րին.
ամենահրաշ զէն Արար չին.
ըզմեզ պահեա շնորհիւ քո յին.
'ի գլխերիս աղջամըղ ջին.
Երկոտասան սուրբ առա քեալք.
եօթանասուն աշակեր տեալք.
յանձնառ լուսոյն լոյս անուա նեալք.
որթոյն կենաց պըտղաբե րեալք.

Ո՜ձեզ աղաչեմք արտասուա գին.
և պաղատիմք կողկողա գին.
վանիչ լերուք դիւաց գըն դին.
ո՛չ մերձենալ առ մեզ չա րին։
Ո՜ին ընտրեալք բանին կե նաց.
գումարք դասուց տեսանո ղաց.
որք զապագայն ժամանա կաց.
գուշակեցիք հոգւով շնոր հաց։
Ը՛նդ մեզ լերուք աղօթա կից.
որք Աստուծոյ էք խօսա կից.
փրկել ըզմեզ 'ի վտան գից.
'ի յարթնութեան և յերա զից։
Թագաւորին երկնաւո րի.
երկրպագօղ 'ի յարգան դի.
մեծ Կարապետ սուրբ ամըլոր դի.
միջնորդ կենաց և օրէ նի։
Քահանաեա մեզ 'ի յօգնու թեան.
զի մի՛ մնցուք 'ի փորձու թեան.
մաքուր մարմնով լինել 'ի քուն.
արդար հոգւով մնալ ար թուն։
'Ի քէն հայցեմք արտասուա գին.
նախավկայ Տեառն արար չին.
սուրբ Ստեփաննոս բացօղ զեր կին.
տեսօղ զՅիսուս յաջմէ ծնո ղին։

Տէր բարեխօս արեամբ քո յին.
տալ մեզ հանգիստ 'ի յանկո ղին.
արթուն լինել յառաւօ տին.
բարեբանել զլոյսն անքըն նին.
Խնդրեմք 'ի քէն Հայր պատուա կան.
լուսաւորիչ ազգի մարդ կան.
տէր սուրբ Գրիգոր պետ պարթե ւան.
լեր մեզ պարիսպ և պահա պան.
Ողորմաբար 'ի մեզ դը թա՛.
զցրուեալ որդիքս քո ժողո վեա՛.
յուրախութիւն ըզմեզ կո չեա՛.
և 'ի բարի՛ն առաջնոր դեա՛.
Կենդանարար Թագաւո րին.
դուք Ճշմարիտ զինուորք նը մին.
սուրբ մարտիրոսք վկայք Փըրկ չին.
որք յաղթեցէք ըզթշնա մին:
Հօրն լուսոյ միշտ մաղթե ցէք.
զՈրդին ընդ Հօր աղաչե ցէք.
Հոգւոյն շնորհօք մեզ օգնե ցէք.
'ի բա՛նսարկուէն զմեզ թափե ցէք:
Զինափայլ երամք ընտ րեալ.
Ճգնաւորաց դասք երա նեալ.

| | |
|---|---|
| Թռչնոց երկնից էք նըմա | նեալ. |
| յայրս և 'ի ծերպըս բընա | կեալ: |
| Գօղեալ հոգւոց մեր 'ի մար | մին. |
| լերուք պարիսպք ընդ դէմ չա | րին. |
| զի յաղթեսցուք հակառա | կին. |
| խորտակելով ըզշէնս նո | րին: |
| Ճրագունք վառեալ լուսով 'ի | լի. |
| սուրբ կուսանաց դասք երա | մի. |
| արժան եղեալք առագաս | տին. |
| և անթառամ սուրբ պըսա | կին: |
| Մեզ բարեխօս լերուք սի | րով. |
| առ տէր Յիսուս աղերսե | լով. |
| 'ի փորձանաց զմեզ փըրկե | լով. |
| յանշէջ հըրոյն ազատե | լով: |
| Յանեղ լուսոյ Աստուածա | յին. |
| լուսոյ ստեղծեալք բանիւ նո | րին. |
| զարդարեցայք հոգւով շնոր | հին. |
| դասք լինելի զօրք երկնա | յին: |
| Նախախնամել՝ զմեզ փութա | ջիք. |
| և յօգնութիւն առ մեզ հա | սիք. |
| որ յԱստուծոյ հրամանա | ռիք. |
| ով Ճշմարիտ մեր սիրե | լիք: |
| Շնորհատու ազգի մարդ | կան. |
| տէր մեր Յիսուս անքըննա | կան. |

ըզձեզ պահեմ միշտ անսա սան.
սատի մինչ յօր քո գալըս տեան,
Ողորմութիւն մեզ պարգև եմ.
զհիւանդ հոգիս մեր բըժըշ կեմ.
'ի բանսարկուէն ըզձեզ փըր կեմ.
և 'ի չարեաց անփորձ պա հեմ,
Չար իշխանքըն խաւա րին.
որք ընդ ծառայս քո մարտըն չին.
քո նըշանաւ սըրբոյ խա չին.
աներևոյթ կործանե ցին:
Պարգևէիչ բարեաց մարդ կան.
ամենառատ յամենե սեան.
պատրաստեցո մեզ անխա փան.
զպէտըս հոգւոյ և մարմնա կան:
Ջուր շնորհեմ ինձ արտաս ուաց.
զի լուացից զգործըս չա րեաց.
արժան եղէց քոյ հայրա նեաց.
ընդ իմաստուն սուրբ կուսա նաց:
Ահա բարի իմ Տէր Յի սուս.
և հաց կենաց սովեալ հոգ ւոյս.
առաջնորդեմ մոլորե լոյս.
և կերակրեմ զմիտս ընդ մարմ նոյս,
Արբեմ զհոգիս յաղտոյ մե ղաց.
'ի զանազան չար փորձա նաց.

տուր ինձ գը՛նալ ըստ քո կա  մաց·
զի արժանի եղէց փա  ռաց·
Վըրաւորեայ զիս Թշնա  մին·
այն որ չկամի զկեանս մարդկա  յին·
զիս բժշկեա տէր երկնա  յին·
լուսաւորեա լուսով քո  յին։
Տրտմեալ հոգւոյս լե՛ր ըսփո  փիչ·
ցաւած մարմնոյս լե՛ր դարմա  նիչ·
մոլոր մտացըս լե՛ր ուղ  ղիչ·
ամէնառատ բարեաց տըր  ւիչ։
Րամից սըրբոյ աղաչա  նաց·
իննեակ դասուց հրեղէն զօ  րաց·
առաքելոց քոց սիրո  ղաց·
մարգարէից տեսանո  ղաց։
Ցանկալի հայրապե  տաց·
և երջանիկ վարդապե  տաց·
արիւնաներկ մարտիրո  սաց·
և գերագոյն Ճգնաւո  րաց։
Ւիւսապըսակ սուրբ կուսա  նաց·
որք փեսայիդ սպասեն փա  ռաց·
և ամենայն մաքուր ան  ձանց·
հետևողաց քոյին կա  մաց։
Փըրկեա զհոգիս ՚ի տանջա  նաց·
զաղըրատեսիլ յանքուն որ  դանց։

ըսել տուր զձայն քո աւե    տեաց·
զոր խոստացար քոց սիրո    դայ։
Քեզ Հօրդ փառք միշտ առա    քեմք·
զՈրդիդ ընդ Հօրըդ դաւա    նեմք·
ըզ Հոգիդ սուրբ բարեբա    նեմք·
Երրորդութեանդ երկրպա    գեմք։

Ն.Պ.Ն.

# ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

գործադրի գրոցս աղօթից.

Փառաբանութիւն անդադար Երեք-
սրբեան Համագոյ Երրորդութեան
Հօր և Որդւոյ և Սրբոյ Հոգւոյն՝ Ո-
րոյ ամենահզօր ձեռինն օգնութեամբ
կանգ եղ տիպ Հոգեւնոյս Աղօթիցս՝
խնկելոց յաստուածաբնակ սրտէ Երա-
նելի Հօր մերոյ սրբոյն Եփրեմի Խու-
րին Ասորւոյ 'ի հոգևոր զուարճութին
աստուածախօս աղօթաւորաց.

Արդ՝ ով աստուածախօս աղօթողք
յիշեսջիք յարժանահայց մաղթանս ձեր՝
զմեծներախտ Բարձր Սրբազան Մետ-
րապօլիտ Ասպետ Հայրն Պաղտասար
վիճակաւոր Առաջնորդն Ղարաբա-
ղայ և հայցեսջիք յանխնախանձ պարգևա-
տուէ ամենայն բարեաց ու կենդանիան
անձրևել հանապազ յանմատոյց Աթո-
ռոյ շնորհաց իւրոց զցօղ անսպառ գը-
թութեան իւրոյ, իսկ զննջեցեալսն
արժանաւորել անանց փառաց ան-
վախճան արքայութեան իւրոյ
ամէն.